

Եւրոպայի խորհուրդ

Փաստեր եւ թեր

Հիմնադրել է 1949 թականի մայիսի 5-ին: Նստավայրը՝ Ստրասբուրգ: Անդամ է 41 պետութիւն:

1989 թականին Արեւելեան եւ Կենտրոնական Եւրոպայի երկրների համար ստեղծել է «Յատուկ հրապարակախոսութեան կարգավիճակ» Խորհրդարանական վեհաժողովում:

Եւրոպայի խորհուրդի նպատակները՝

Հիմնել համատեղական համագործակցութիւն, պաշտպանել մարդու իրաւունքները, բազմակարծութեան վրայ հիմնւած ժողովրդավարութիւնը եւ օրէնքի գերակայութիւնը, ստորագրել համաձայնագրեր՝ կազմակերպութեան անդամ երկրների սոցիալական եւ իրաւական հարցերը կարգաւորելու նպատակով, 1989 թականից սկսած՝ նաեւ.

- ինել մարդու իրաւունքների յեմարան ետկոնոմիստական Եւրոպայի համար,

- օգնել Արեւելեան եւ Կենտրոնական Եւրոպայի երկրներին քաղաքական, օրէնսդրական եւ սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու եւ ամրապնդելու գործում.

- աջակցել եւրոպական մշակութային իւրայատկութեան գարգացման եւ գիտակցմանը,

- հաղորդել Եւրոպայի փորձը մարդու իրաւունքների, ժողովրդավարութեան, կրթութեան, մշակոյթի, սոցիալական հարցերի, շրջակայ միջավայրի պաշտպանութեան եւ այլ բնագաւառներում:

Գործունէութեան մեխանիզմ

Աշխատանքային մարմինները. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ (COMMITTEE OF MINISTERS)

Որոշումներ կայացնող մարմինն է:

Կազմւած է անդամ-երկրների ԱԳ նախարարներից:

Անցկացնում է նիստեր առնուազն տարին երկու անգամ: Մնացած ժամանակ աշխատում է մշտական ներկայացուցիչների կազմով: Իր գործունէութեան մէջ յեմում է միջկառավարական համագործակցութեան կոմիտէների (100-ից անելի) ճիւղաւորւած ցանցի վրայ:

Միայն նախարարների կոմիտէն իրաւունք ունի ԵՄ-ի կողմից պարտադիր որոշումներ ընդունելու: Հաստատւած փաստաթղթերը ներկայացւում են անդամ-երկրների կառավարութիւններին՝ երաշխատութիւնների ձեւով:

ԵՄ-ի պատմութեան ընթացքում ընդունել է մօտ 170 կոնւենցիա: Դրանք հիմնականում վերաբերում են մարդու իրաւունքների, բայց մի շարք կոնւենցիաներ ծածկում են նաեւ՝ այլ ոլորտներ, որոնք ուղղւած են ամրապնդելու Եւրոպայի խորհրդի ժողովրդավարական, սոցիալական եւ մշակութային միասնութիւնը:

Կոմիտէի նախագահութիւնը շտաբային է եմբարկւում 6 ամիսը մէկ: 2000թ. մայիսից ԵՄ-ում նախագահում էր Իտալիան, նոյեմբերի 9-ից նախագահութիւնը փոխանցւեց Լատւիային:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԺՈՂՈՎ (PARLIAMENTARY ASSEMBLY)

ԵՄ-ի Խորհրդարանական վեհաժողովը մայր ցամաքի պատմութիւնում առաջին եւրոպական վեհաժողովն է:

ԵՄ-ի խորհրդատական մարմինն է: Ներկայացուցիչներն ընտրւած են 41 ազգային խորհրդարաններից: Գումարում է տարին մէկ նստաշրջան՝ չորս մասով:

Ունի 572 անդամ (286 պատգամաւոր եւ 286 փոխարինող), որոնք ներկայացնում են 41 ազգային խորհրդարան, եւ «Յատուկ հրապարակախոսութեան կարգավիճակ» ունեցող երկրների խորհրդարանների պատիրակութիւններ:

Վեհաժողովն ունի 5 քաղաքական խմբակցութիւն. սոցիալիստական խմբակցութիւն, Եւրոպական ժողովրդական կուսակցութեան խմբակցութիւն, լիբերալների, ժողովրդավարների եւ բարեփոխումներն իրականացնող անձանց խմբակցութիւն, եւրոպական ժողովրդավարների խմբակցութիւն եւ միացեալ եւրոպական ձախակողմեայ խմբակցութիւն: Խորհրդարանականներից մի քանիսը չեն պատկանում ոչ մի քաղաքական խմբակցութեան:

Որպէս կանոն, ԽՎ-ի քանաձեւերը ընդունում են մեծամասնութեամբ: Գործում են 13 յանձնաժողով, 25 ենթալանձնաժողով եւ 5 մասնագիտացւած կոմիտէ (ad hoc committees):

Խորհրդարանական վեհաժողովի նախագահ ընտրւում է ԽՎ-ի անդամներից երեք հետեւողական մէկտարեայ ժամկէտներով: ԽՎ-ի նախագահը եւ նրա տեղակալները (թուվ 17), ինչպէս նաեւ հինգ քաղաքական խմբակցութիւնների նախագահները կազմում են ԵՄ ԽՎ բիւրօն: 1999թ. յունւարից ԵՄ-ի Խորհրդարանական վեհաժողովում նախագահում է Լորդ Ռասել- Ջոնսթոնը (Russel Johnston) (Մեծ Բրիտանիա):

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ (CONGRESS OF LOCAL AND REGIONAL AUTHORITIES EUROPE) ԽՈՐՀՐԴԱՏԻԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ստեղծել է Վիեննայի 1993թ. ԵՄ-ի անդամ պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարների զագաթնաժողովի երաշխատութեան համաձայն: Ունի 286 տեղական եւ տարածքային իշխանութիւնների ընտրովի ներկայացուցիչ: Նիստեր է գումարում տարին երկու անգամ:

Կազմւած է երկու պալատներից, որոնցից մէկը ներկայացնում է տեղական իշխանութիւնները, միսը՝ տարածքային: Գլխաւոր նպատակն է Եւրոպայում մերձսահմանային եւ միջտարածքային համագործակցութեան ամրապնդումը:

ԳԼԽԱՒՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ (SECRETARIAT GENERAL)

աջակցում է ԵՄ-ի աշխատանքային մարմինների գործունէութեանը:

Քարտուղարութիւնն ունի տարրեր ազգութիւնների մօտ 1200 աշխատակից եւ ղեկավարում է գլխաւոր քարտուղարի կողմից, որն ընտրւում է հինգ տարին մէկ: 1999 թ. յունիսի 21-ին ԵՄ գլխաւոր քարտուղար ընտրւեց Վալտեր Շվիմերը (Walter Schwimmer) (Աստրիա, քրիստոնեայ- ղեմկրատ):

Պաշտօնական լեզուներ

Ֆրանսերէն եւ անգլերէն: Խորհրդարանական վեհաժողովը օգտագործում է նաեւ գերմաներէնը, իտալերէնը եւ ռուսերէնը՝ որպէս աշխատանքային լեզուներ:

Բիւջէ

Եւրոպայի խորհրդի գործունէութիւնը Ֆինանսատրում է անդամ պետութիւնների կողմից նրանց ազգաբնակչութեան

Եւրոխորհուրդ

Եւ ռեսուրսների համեմատ: 1998թ. բիզնէս կազմել է մօտ 210 մլն. էքիւ կամ, մօտաւորապէս, 1.4 մլրդ ՖՖ:

Գործնական ձեռքբերումներ

Եւրոպայի խորհուրդն ընդունել է մօտ 170 կոնսենցիա եւ համաձայնագիր, որոնք համարժէք են 75 000 երկկողմանի համաձայնագրերի եւ որոնց մեծ մասը բաց է ոչ-անդամ երկրների համար: «Փակ» համաձայնագրերը, որոնք ենթադրում են միայն անդամ-երկրների մասնակցութիւնը, 10-ն են:

Հիմնարար նշանակութիւն ունի Մարդու իրաւունքների եւ հիմնական ազատութիւնների պաշտպանութեան եւրոպական կոնսենցիան (ՄԻԵԿ), որի դրոյթների պահպանումից կախած է տեւալ երկրի ԵՆ-ում անդամակցութիւնը: ՄԻԵԿ-ի առանցքն են Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը: Համաձայն Վիեննայի 1993թ. գազաթնաժողովի որոշումների, ընդունեց N11 արձանագրութիւնը ՄԻԵԿ-ի վերաբերեալ, որը նախատեսում էր Մարդու իրաւունքների եւրոպական յանձնաժողովի եւ դատարանի միաձուլումը Մարդու իրաւունքների միասնական եւրոպական դատարանի տեսքով: Դատարանի բացումը տեղի ունեցաւ 1998 թ. նոյեմբերի 3-ին:

1997 թ. հոկտեմբերի 10-ից 11-ը Ստրասբուրգում կայացաւ ԵՆ-ի անդամ երկրների պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարների II գազաթնաժողովը, որն ընդունեց մի շարք յատուկ որոշումներ: Դրանք են Մարդու իրաւունքների եւրոպական միասնական դատարանի ստեղծման վերաբերեալ որոշումը, մարդու իրաւունքների յանձնակատարի գրասենեակ ստեղծելու առաջարկը, մարդկային կլոնատրման (cloning) արգելումը, սոցիալական բնագավառում սոցիալական իրաւունքների խթանում եւ Սոցիալական զարգացման հիմնադրամի աջակցութիւնը ԵՆ-ի սոցիալական միասնութեանը նւիրած ակցիային, կռուսպցիայի դէմ պայքարը եւ «Եւրոպա. ընդհանուր ժառանգութիւն» խորագրով արշաւի ձեռնարկում:

Անդամակցութեան պայմաններ

Իրական ժողովրդավարութեան առկայութիւն (Democracy)

Իրական պետութիւն (Rule of law)

Պետութեան իրաւասութեան տակ գտնուող բոլոր անձանց մարդու իրաւունքների եւ հիմնական ազատութիւնների պաշտպանութիւն (Human rights):

Անդամակցութեան գործընթաց

Թեկնածուերկրի՝ ԵՆ-ին անդամակցելու ընթացակարգը կազմած է հետեւեալ փուլերից:

Շահագրգիռ երկրի ԱԳ նախարարը պէտք է անդամակցութեան պաշտօնական նամակ-դիմում ներկայացնի ԵՆ-ի գլխատը քարտուղարին: Նամակը փոխանցում է նախարարների կոմիտէին, որն իր հերթին ներկայացնում է դիմումը Խորհրդարանական վեհաժողովի բիւրոյին թեկնածու երկրի՝ ԵՆ-ի կանոնադրական չափանիշներին համապատասխանութեան մասին երաշխատրութիւններ յայտնելու խնդրանքով (նախարարների կոմիտէն անդամակցութեան մասին որոշում կարող է ընդունել միայն Խորհրդարանական վեհաժողովի հետ քննարկում անցկացնելուց յետոյ):

Խորհրդարանական վեհաժողովի բիւրօն նշանակում է թեկնածու-երկրի համար երեք զեկուցող՝ մեկական քաղաքական եւ իրաւական հարցերի յանձնաժողովներից:

Քաղաքական հարցերի յանձնաժողովը պատրաստում է զեկույց, որը պարունակում է անդամակցութեան մասին որոշման նախագիծը: Միւս յանձնաժողովը այդ զեկույցի վերաբերեալ ներկայացնում է գրատը կարծիք:

Վեհաժողովի բիւրոյի թոյլտրեանք, յանձնաժողովներից մէկը կարող է իր նիստերից մէկն անցկացնել Հայաստանում:

Անդամակցութեան մասին կարծիք կազմելիս յանձնաժողովները յենում են «ակնառու իրաւաբանների» պատրաստած զեկույցների վրայ: Այդ իրաւաբաններին նոյնպէս նշանակում է Խորհրդարանական վեհաժողովը՝ մեկական Մարդու իրաւունքների եւրոպական դատարանից եւ Մարդու իրաւունքների եւրոպական յանձնաժողովից: Նրանց պատրաստած զեկույցը վերաբերում է ԵՆ-ի նորմերին Հայաստանի իրաւական համակարգի համապատասխանութեան աստիճանին:

Վերջնական զեկույցը ներկայացնում է վեհաժողովի լիազօմար նիստին, որի դրական կարծիքից յետոյ միայն նախարարների կոմիտէն կարող է քերարկութեան դնել անդամակցութեան հարցը:

Անդամակցութեան իրական պայմաններ

Համաձայն անդամ-երկրների պետութիւնների եւ կառավարութիւնների ղեկավարների Վիեննայի հռչակագրի (9 հոկտեմբերի, 1993թ.) ԵՆ-ին անդամակցելու համար անհրաժեշտ է, որպէսզի շահագրգիռ երկիրը.

իրեն համարի եւրոպական, կատարի Կանոնադրութեան մէջ նշած պարտականութիւնները, ապահովի մարդու իրաւունքները եւ հիմնական ազատութիւնները, յարգի օրէնքի գերակայութիւնը, պատրաստ լինի ստորագրելու Մարդու իրաւունքների եւրոպական կոնսենցիան եւ պարտաւորի այն ժամանակին վաւերացնելու՝ նազագոյն վերապահումներով, համարի իրական ժողովրդավար պետութիւն, մասնաւորապէս, անցկացնի ազատ եւ արդար ընտրութիւններ՝ զաղտնի քերարկութեանք, որի արդիւնքում ձեւաւորում է տարբեր կուսակցութիւններ ներկայացնող խորհրդարան, եւ պարտաւորի կանոնաւոր կազմակերպել նման ընտրութիւններ: Բացի այդ, զեկուցողները հետագայում կարող են հաշի առնել հետեւեալ հանգամանքները.

թեկնածու պետութիւնը.-

պատրաստ է միանալու ԵՆ-ի գոյութիւն ունեցող բազմաթիւ իրաւական գործիքներին եւ ընդունել կազմակերպութեան «իրաւական դաշտին» ինտեգրացնելու ժամանակացոյցը,

-ապահովում է իր տարածքում բնակող ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները, որոնք մասնաւորապէս արձանագրած են Մարդու իրաւունքների եւրոպական կոնսենցիայում,

-ճանաչում է Եւրոպայում պետութիւնների սահմանների անձեռնմխելիութիւնը, որոնք կարող են փոփոխուել միայն խաղաղ ճանապարհով՝ համապատասխան ԵԱՀԿ-ի դրոյթների,


-վայելում է քաղաքական կայունութեան համապատասխան մակարդակ,

-համաձայն է համապատասխան ժամկետում միանալ ԵՆ-ի արտօմութիւնների եւ իմունիտետների ընդհանուր համաձայնագրին: ■

ԱԳՆ հասարակութեան հետ յարաբերութիւնների վարչութիւն

Է՞ն՝ Կ՞ն՝ Ն՞ն՝ Ս՞ժ՞ն՝ Ս՞ն՝ Ս՞ն՞

ԻԻ Հանրապետության յեղափոխության 22-րդ ամեակին ներած ծրագիր՝ Հ.Ռ. Զհարմահալ միութիւնում.- Սոյն քականի փետրարի 9-ին, Թ.Հ.Ռ. Զհարմահալ միութիւնում տօնեց ԻԻ յեղափոխության 22-րդ ամեակը:



Հանդիսութեանը ներկայ էին Իրանի Ներքին գործերի նախարարութեան ներկայացուցիչ՝ տիկ. Թաւաքոյին, Թեհրանի Կուսակալութեան ներկայացուցիչ՝ պրն. Քոմիջանին, ԻԻ Խորհրդարանում հիւսիսային իրանահայութեան պատգամատուր ղոկտ. Լ. Դաւթեանը, Պատգամատուրական ժողովի եւ Թեմական Խորհրդի ատենապետները, եւ ազգային մարմինների ներկայացուցիչներն ու նաեւ մեծ թուով քեհրանահայեր:

Նախ ընթերցեց Թեհրանի Թեմական Խորհրդի ուղերձը, այնուհետեւ ելոյթ ունեցան Հ.Մ.«Արարատ» Կազմակերպութեան «Արփա» երգչախումբը, որի խմբավարն է Ռազմիկ Օհանեանը: Որպէս օրայ բանախօս՝ ելոյթ ունեցան ղոկտ. Լ. Դաւթեանը եւ պրն. Քոմիջանին: Ասամուրով երեւան եկաւ Անգինէ Աբրահամեանը:

Հանդէսի ընթացքում տիկ. Ասմէտեանի, Սեհրաբեանի եւ Դուկասեանի միջոցով պարգևատրեցին համալսարանի քիմիայի առարկայում գերազանց հանդիսացող ուսանողները:

Ծրագրի վերջում հանդէս եկան «Ակունք» եւ «Կանաչ» պարախըմբերը, որոնց պարուստյցներն էին Կա-

րինէ Մանուչարեանը եւ Արուս Աւագեանը:

Լրագրութիւնը՝ Թամիկ Բեշիշեանի

Է՞ն՝ Կ՞ն՞

ԻԻ Խորհրդարանը կը քնարկի Իրան-Ռուսաստան մաքսատնային համագործակցութիւնների ընդլայնման համաձայնագրի օրինագիծը.- Ըստ վերոյիշեալ համաձայնագրի՝ ԻԻՀ եւ ՌԴ միջեւ ճամբորդական եւ ապրանքափոխադրութեան մաքսատնային գործերը այսուհետեւ առաւել դիւրին եւ արագ ընթացք կը ստանան:

Համաձայն պայմանաւորաձութեան՝ երկու կողմերը համագործակցելու եւ նաեւ օրինագանցութիւնների պարագայում պատժողական գործողութիւններում եւ ներդաշնակութիւն եւ ստեղծելու իրենց մաքսատնային գործելակերպի միջեւ:

Իրանը ողջունում է Հայաստանի «իրատեսական եւ հեռատես» դիւանագիտութիւնը.- Պաշտօնական տեսակէտներ արտայայտող անգղիստատ «Իրան դէյլի» օրաթերթն իր երեկայ խմբագրականում ողջունել է Հայաստանի «իրատեսական եւ հեռատես դիւանագիտութիւնը»: Կարեւորելով Թեհրան-Երեւան յարաբերութիւնները, օրաթերթը գովաբանել է, թէ «ժայերը վերջնականապէս շրջադարձ կատարեցին դէպի Իրան»: «Հաշի առնելով տարածաշրջանում վերջին փոփոխութիւնները, Հայաստանը կարեւորում է երկու գործօն՝ աշխարհի կողմից տարածաշրջանում Իրանի դերի վերաիմաստաւորումը եւ որոշ երկրների, այդ թում Ադրբեջանի շփոթութիւնը: Այնուամենայնիւ, մենք ափսոսում ենք, որ Ադրբեջանը կորցնում է իր բոլոր «յաղթաթղթերը»՝ առաջին հերթին Արեւմուտքի հետ իր նախային առեւտուրը, մինչդեռ Հայաստանը ձեռնամուխ է եղել շահաւետ նախագծերի», գրում է «Իրան Դէյլին»:

Ծ՞ն՞ Խ՞ն՞ Է՞ն՞ Կ՞ն՞

Մեծ կորուստ.- Հայ գրականագիտութիւնը անդարմանելի ու ծանր կորուստ կրեց: Մահը կիսա-

ւարտ թողեց շարունակ իմաստաւորող մի կենսագրութիւն՝ կեանքից հեռացաւ ակամաւոր գրականագէտ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պետական եւ գրական մրցանակների դափնեկիր Հրանտ Մմբատի Թամրագեանը: Իսկ մահուան մասին միտքը թում է տարօրինակ, անհեթեթ ու անկարելի:

Լպուտեանը բաժանեց երրորդ տեղը.- Իտալիայի Սան Վինսենտ քաղաքում արարովեց Վալէ դ'Աստա անանումը կրող շախմատի միջազգային մրցաշարը: 130 մասնակիցները, որոնց թում էին շուրջ երեք տասնեակ գրոսմայստերներ, պայքարում էին շեյցարական մրցակարգով, 9 տուրով:

Հայաստանի Հանրապետութիւնը ԱԺ-ինը լինել չէր կարող (Արմէնպըրես 09.02.2001).- «Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթի խընդիրը իր լուծումը ստացել է դեռեւս կառավարութեան փետրարի 1-ի նիստում», ասաց տեղեկատուային եւ գրահրատարակչութեան վարչութեան պետ Էդարդ Միլիտօնեանը՝ նկատի ունենալով յիշեալ նիստում «Հանրապետութիւն» ՓԲԸ ստեղծելու մասին կառավարութեան ընդունած որոշումը:

Փետրարի 16-ին Երեւան կը ժամանի Վրաստանի արագործնախարարը (Նոյեան Տապան 09.02.2001).- Վրաստանի արագործնախարար Իրակլի Սենաղարիշվիլին փետրարի 16-ին, երկօրեայ այցով, կը ժամանի Երեւան: Վրաստանի ԱԳՆ-ն փետրարի 9-ին յայտնել է, որ Սենաղարիշվիլին հանդիպելու է ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի, վարչապետ Անդրանիկ Մարգարեանի, ԱԺ խօսնակ Արմէն Խաչատրեանի եւ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հետ:

ՀՀ գլխաւոր դատախազը երաժարական է ներկայացրել (Նոյեան Տապան 09.02.2001).- ՀՀ գլխաւոր դատախազ Բորիս Նազարեանը ԱԺ պատգամատուրներ Էմմա Խուդարաշեանին եւ Արամայիս Բարսեղեանին փետրարի 9-ի առաւօտեան յայտնել է, որ նախորդ օրը ինքը երաժարական է ներկայացրել հանրապետութեան նախագահին: Այս մասին յայտնեց «Հայոց տուն»

միութեան նախագահ Վարդան Պետրոսեանը, որը նույնպէս ներկայ է եղել հանդիպմանը: Գլխավոր դատախազի հետ պատգամատր- ների հանդիպման նպատակն էր միջնորդել «21-րդ դար» միջազգային անկախ ստոցիացիայի նախագահ Արկադի Վարդանեանի դէմ հարուց- ւած գործը կարճելու հարցով: Ըստ Վարդան Պետրոսեանի, հրաժարա- կանը Բորիս Նազարեանը պատ- ճառաբանել է Ա. Վարդանեանի դէմ հարուցւած գործի հետ կապւած իր յստուկ կարծիքով:

Որոշ քաղաքական ուժերի յայ- տարարութիւնները սոսկ մաս- նատր կարծիք են (Նոյեան Տապան 09.02.2001).- Ջառախքին ինքնավա- րութիւն տալու հարցի շուրջ Հա- յաստանի որոշ քաղաքական ուժերի յայտարարութիւնները սոսկ մաս- նատր կարծիքի են եւ այդ ուժերի տեսակէտն են արտայայտում, դա պետական քաղաքականութիւն եւ պետական կարծիք չէ: Փետրուարի 9- ի ճեպագրոյցում այս մասին յայտա- րարեց ՀՀ նախագահի մամուլի քար- տուղար Վահէ Գարբիէլեանը, ընդգը- ծելով, որ պետական քաղաքակա- նութիւնն արտայայտում են երկրի նախագահը եւ արտգործնախա- րարը:

Պանկրեատիտի բուժման նոր մեթոդ (Արմէնպրես 07.02.01).- Հայ բժիշկների մի խումբ՝ պրոֆեսոր Յովհաննէս Մարութանեանի ղեկա- վարութեամբ, մշակել է սուր պան- կրեատիտի՝ ենթաստամոքսային գեղձի ծանր հիւանդութեան, դեղո- րայքային բուժման արդիւնատու մեթոդ:

Կարէն Յունանեանի պաշտպանը ծանօթանում է գործի միջոցին (Նոյեան Տապան 07.02.2001).- Հոկ- տեմբերի 27-ի գործով մեղադրեալ Կարէն Յունանեանի պաշտպանու- քիւնը վերստին ստանձնած փաս- տաբան Համլետ Ստեփանեանը ար- դէն մեկ անգամ տեսակցել է իր պաշտպանելի հետ, ներկայումս ծանօթանում է գործի միջոցին՝ փոր- ձելով մինչեւ դատավարութեան սկսելը պատրաստ լինել մասնակ- ցելու դրան, յայտնեց փաստաբանը: **Երախտիքի ցոյց Ֆրանսիայի դեսպանութեան առջեւ.**- Սոյն

քրականի փետ. 7-ին ՀՀ-ում Ֆրան- սիայի դեսպանութեան առջեւ տեղի ունեցաւ Հայաստանի պարարեստի միութեան նախաձեռնած երախտիքի ցոյց: Միութեան մի շարք պարային խմբեր, ի թիւս հանրաճանաչ «Բերդ» անսամբլի, ազգային տարազներով եւ ցուցապատառներով սկսեցին երթը պետական Կրկէսի մօտից: Ամփոփելով Ֆրանսիայի դեսպա- նութեան շէնքի առջեւ, ի լուր բազ- մահարիւր հասարակութեան եւ լրա- տամիջոցների, Հայաստանի պա- րարեստի միութեան նախագահ Կա- րէն Գեղարեանը միութեան եւ երթի մասնակիցների անուից հրապա- րակեց Ֆրանսիայի դեսպան Միշել Լեգրային ուղղւած շնորհակալական ուղերձը:

Սահմանամերձ գիւղերի երիտա- սարդ բժիշկները չեն զօրակոչ- ւում (Արմէնպրես 07.02.01).- Երիտա- սարդ բժիշկները, որոնք մասնագի- տութեամբ աշխատում են Հայաս- տանի արեւի քան 80 սահմանամերձ գիւղերում, ազատում են բանակ զօ- րակոչելուց: Կառավարութեան այս որոշումը, ուժի մէջ է մտել այս տար- ւայ յունւարից: ՀՀ առողջապահու- քեան փոխնախարար Արտակ Ջէյ- նալեանի խօսքերով, կառավարու- քեան այս քայլը թոյլ կը տայ սահ- մանամերձ գիւղերն ապահովել բոլոր մասնագիտութիւնների անհրաժեշտ բժիշկներով, բացի դրանից այն կը նազեցնի գիւղացիների արտահոս- քը: Սահմանամերձ գիւղերի մեծ մա- սը գտնուում է Տաւուշի եւ Մլինիքի մարզերում:

ՅԷԷ² ¼ ¶ ² ՄԱԵՄ

Թուրքական դատարանը մերժել է Գէորգ Հաջարեանի հայցը (Նոյեան Տապան 15.02.2001).- Թուր- քական հեռուստատեսութիւնն ան- դրրադարձել է լիբանանահայ Գէորգ Հաջարեանի կողմից վերջերս հա- րուցւած դատական հայցին՝ Թուր- քիայում իր պապի սեփականութիւնը հանդիսացող հողատարածքի հարցի շուրջ:

Ռ. Քոչարեան. «Ֆրանսիայի հայ համայնքը ամենահզօր, մտա- տր ու քաղաքական ուժ ունեցող հա- մայնքներից մէկն է» (Արմէնպրես

15.02.01).

Աւարտին է մօտենում ՀՀ նախագահի պետական այցը Ֆրան- սիա: Ռոբերտ Քոչարեանը երէկ հանդիպեց Փարիզի, իսկ այսօր՝ Լիոնի հայ համայնքների ներկայա- ցուցիչների հետ: Փարիզի հայու- քեան հետ կայացած հանդիպման ընթացքում Ռ. Քոչարեանը հայ հա- մայնքը որակեց որպէս ամենահզօր, ամենակազմակերպւած մտաւոր ու քաղաքական ուժ ունեցող համայնք- ներից մէկը: Նախագահը նշեց, որ ֆրանսահայ համայնքը չի մոռացել ցեղասպանութիւնը, որի ապացոյցը ցեղասպանութեան ճանաչման հա- մար ծաւալւած գործունեութիւնն է:

ԼՂՀ նախագահի մահափոր- ծի գործով դատավճիռը կը հրապարակի տասը օրից (Նոյ- եան Տապան 15.02.01).- ԼՂՀ նա-



խագահի դէմ մա- հափործի գործով փետրուարի 14-ի դատական նիս- տում դատաւոր Մուրէն Ալեքսան- եանը յայտարա- րեց, որ դատավը- ճիւր կը հրապա- րակի 10 օր յե- տոյ: Ըստ օրէնքի, խորհրդակցական սենեակում գտնուելու այդ 10 օրերի ընթացքում նա չպէտք է շփուի որեւէ մէկի հետ, նոյնիսկ արգելւում է հե-ռախօսով որեւէ մէկի հետ կապ ու-նենալը:

Բացառիկ համերգ Փարիզի Աստ- ւածամօր տաճարում.- 9 հազար փարիզցիներ, որոնք երեքշաբթի երեկոյեան հաւաքել էին Փարիզի Աստուածամօր տաճարում, տեսական ծափողջիւններով, յունկայս ողջու- նեցին Հայաստանի պետական ա- կադեմիական երգչախմբի ելոյթը: Երգչախմբի ղեկավար, ԽՍՀՄ ու Հայաստանի ժողովրդական ար- տիստ, պետական մրցանակների դափնեկիր Յովհաննէս Չեքիջեանին շնորհատրեցին համերգին ներկայ նախագահներ Ռոբերտ Քոչարեանն ու Ժակ Շիրակը, նրանց տիկնայք՝ Բելլա Քոչարեանն ու Բերմարդետ Շիրակը, Փարիզի կարդինալ Ժան- Լիւկ Լիւստիժէն:

Արամ Ա կաթողիկոսը չի ցանկա- ցել դատապարտել քիրտ ուժի

կիրառումը.- Փարիզի «Յառաջ» օրաթերթը տեղեկացնում է, որ յունարի 29-ից փետրուարի 5-ը Բեռլինում գումարել է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի նիստը, որտեղ քննարկել է «քիրտ ուժի կիրառման դեմ» կոչ հրապարակելու հարցը՝ նկատի ունենալով աշխարհի տարբեր մասերում պատերազմական գործողությունների եւ օտարատեսացության դրսևտրումների պարագան:

Իտալիան 200 հազար դոլար է յատկացրել Հայաստանին՝ երաշտից տուժածներին օգնելու հարար (ԱրմՆայրես 14.02.01).- Իտալիայի կառավարութիւնը 200.000 ԱՄՆ դոլար է նւիրել ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրին (ՊՀԾ)՝ անցած տարւայ երաշտից Հայաստանի առաւել տուժած բնակիչներին օգնելու նպատակով: Այն հանրապետութեան վեց մարզերի օժանդակ տնտեսութիւններ վարող ընտանիքներին կը յատկացի ալիւրի տեսքով՝ որպէս անվճար օգնութիւն, ինչպէս նաեւ վարձատրութիւն՝ «Մնունդ աշխատանքի դիմաց» ծրագրին մասնակցելու համար: Սա Իտալիայի կառավարութեան արդէն երկրորդ նւիրատութիւնն է Հայաստանին: Առաջինը յատկացել է 1995-ին՝ 3 մլն ԱՄՆ դոլարի չափով:

Էդւարդ Չերեջեանը բերես նշանակի փոխպետքարտուղար.- «Արմինեան միտքը սփեքթէթթր» շաբաթաթերթը, «Ռոյթեր» գործակալութեան լրատութեան վրայ յենելով, տեղեկացնում է, որ ամերիկահայ վետերան դիւանագէտ Էդւարդ Չերեջեանը կարող է նորընտիր նախագահ Ջորջ Բուշի կողմից նշանակել փոխպետքարտուղար:

Թուրքիան սպառնում է նաեւ Շրէլցարիային (ԱրմՆայրես 09.02.01).- «Անատուր» թուրքական գործակալութիւնը հաղորդում է, որ Շրէլցարիայի խորհրդարանը մտադիր է քննարկել Հայոց ցեղասպանութեան հարցը: Ծագումով յոյն պատգամաւոր Եօզէֆ Չիադիսի պատրաստած եւ 4 պատգամաւորների կողմից ստորագրւած նախագիծը քննարկելու է մարտին:

Թուրքիայում լոյս տեսած հայ գրողի գիրքը աղբրեջանցում գրգռում է .- Յունւարի 27-ին Քեօլնի Ալլովելթցցհաուսի հիւրն էր Գերմանահայկական ընկերակցութեան նախագահ, գրող, թարգմանիչ Բաֆֆի Քանդեանը (Քերարջեան): Հայ արձակագրին հրաւիրել էին Քեօլնի գերմանաթուրքական Ափսիէ մարդասիրական կազմակերպութիւնը եւ թուրքական ձախակողմեան Թիւրէյ կուսակցութիւնը: Ալլովելթցցհաուսում ընդհանրապէս գօռավիզ են կանգրնում օտարներին, տարբեր ազգութիւնների մշակութային ձեռնարկների միջոցով արծարծում այժմեական խնդիրներ, տւեալ հիմնահարցի վերաբերեալ իրենց վերաբերմունքն արտայայտում:

Միջազգային խորհրդածողով Ստամբուլում «Կովկասի կայունութեան դաշնագրի» շրջանակներում (ԱրմՆայրես 08.02.2001).- Փետրուարի 17-ին Ստամբուլում «Կովկասի կայունութեան դաշնագրի» շրջանակներում կը կայանայ միջազգային խորհրդածողով: Դրան կը մասնակցեն ԱՄՆ-ի, Վրաստանի, Աղբրեջանի, Հայաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի, Յունաստանի պատւիրակութիւնները, ինչպէս նաեւ եւրոպական կազմակերպութիւնների ներկայացուցիչները, յայտնել է Վրաստանի արտգործնախարարութեան յատուկ յանձնարարութիւնների դեսպան Աւթանդիլ Նապետարիձէն: Քաղաքական յարաբերութիւնների վերանայումը ՀՀԿ-ի առաջնահերթ խնդիրն է:

Հայկական ցուցահանդէս Փարիզում՝ Ժակ Շիրակի հովանաւորութեամբ (ԱրմՆայրես 07.02.2001).- Փարիզի արւեստի սրահներից մէկում փետրարի 6-ին բացել է հայկական միջնադարեան Անի քաղաքին նւիրւած ցուցահանդէս, որը նախապատրաստում էր երկու տարւոց ի վեր՝ պատմաբան Յարութիւն Գեորգեանի ջանքերով: Յուցահանդէսն անցկացւում է Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի բարձր հովանաւորութեամբ, իսկ նախաձեռնութիւնը Փարիզի քաղաքապետարանինն է: Քաղաքապետարանի հետ համագործակցել են Հայ բարեգործական ընդհանուր միութիւնը եւ Հայաստանի պատմութեան պետական թանգարանը: ■

Հաղորդագրութիւն 1

Սիրելի Հայրենակիցներ
Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Դորիրդի կողմից կեանքի կոչւած Մեծ Եղեռնի 86-ամեակի Ոգեկոչման Յանձնախումբը իր անդրանիկ նիստում զբաղւեց անցեալ տարիներում Ապրիլ 24-ի քարոզչական ձեռնարկներ եւ յատկապէս քայլարշաւների քննարկման օրակարգով՝ որպէսզի ձեռք բերւած փորձառութիւններից կարողանանք առաւել նպատակասուլաց եւ արդիւնաւէտ կերպով կազմակերպելու եւ ի կատար ածելու ամեակի ոգեկոչման միջոցառումները:

Առ այդ դիմում ենք Ձեզ մեր համայնքի արթուն եւ գիտակից ժողովրդին հետեւեալ հարցերում:

1-2001 թւականի Մեծ Եղեռնի ամեակի ձեռնարկները, քարոզչական աւելի ազդու ոճով կազմակերպելու համար, Ձեր առաջարկներն ներկայացնել՝ գրաւոր կամ բանաւոր Ազգային Առաջնորդարանին մինչեւ սոյն թւականի շաբաթ փետրուարի 24-ը:

2-Կարեւոր այն հարցերից որ յարմար նկատուց մեր համայնքի ուշադրութեանը յանձնել Ապրիլ 24-ի բողոքի քայլարշաւի շարքերից հնչող եւ ժողովրդի ցատումը արտայայտուող լրզունգներն են: Հայերէն թէ պարսկերէն լրզունգները պէտք է լինեն իմաստաւոր, դրսևտրեն բողոքի արտայայտութիւն, հաղորդ լինեն մեր ազգային համոզումներին, քաղաքականօրէն լինեն պատշաճ եւ օրւայ պահանջներին համապատասխան ու յատկապէս կարճ, հատու եւ վանկարկելի ու հնչեղ:

Այսու դիմում ենք բոլոր նրանց, ովքեր կարող են առաջարկել յարմար լրզունգներ, դրանք ամենաուշը մինչեւ սոյն թւականի մարտի 15-ը գրաւոր ներկայացնեն Ազգային Առաջնորդարանի գրասենեակ, 85 ամեակի քայլարշաւում օգտւելու համար: Յարմար նկատուց լրզունգները, ներկայացնող անհատի անուն հետ միասին մամուլի միջոցով կը յայտարարեն:

3-Հայատառ մամուլից ակնկալում ենք նպատակաւորուած ծրագիր մշակելով իրենց քարոզչական աշխատանքները սկսելու անյապաղ նաեւ իրենց առաջարկները փոխանցելու Յանձնախումբին:

*Մեծ Եղեռնի Բիւրաւոր
Նահատակների
86-րդ յիշատակը ոգեկոչող
յանձնախումբ*

ՄՅ ԷՅ . Յ Ն՝ Ե՛ ԳՄ՝ ՆԻ
ՕճճՅ Ն՝ՅՅ ԿՇ ՆՅ ՆՕՅ ½ճճՆՆՆՆՆՆ
Կճճ ԿՇՇՅ ԻՅ Կ ՏՅ Շ . Յ ճՆՆՆՆՆ
ՃճճճՃՃՃ



-Պարոն նախագահ, Երևանում ինձ հետաքրքրեցին ու մի քիչ էլ զարմացրին այն մեծ վահանակները, որոնք վերաբերում են քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամեակին: Ինչո՞ւ են դրանք տեղադրված, չէ՞ որ բոլորը գիտեն, որ հայերը քրիստոնեայ են: Դուք եկեղեցու հետ միասին կազմակերպելով կամ հռչակելով այդ տօնը, արդեօք նպատակ էք դրել համախմբել՝ ողջ հայ ժողովրդին, թե՞ ներդրումներ ներգրավելու կամ սփիւռքի հայութեանն ու զբօսաշրջիկներ հրավիրելու համար է:

- Այստեղ մի քանի խնդիր կայ: Առաջինը՝ 1700-ամեակը նշանակում է, որ մենք՝ հայերս, առաջինն էինք, որ ընդունեցինք քրիստոնեությունն իբրև պետական կրոն: Սա նշանակում է, որ քրիստոնեական արժեքները գնահատեցին դեռ այն ժամանակ, եւ այսօր արդէն կարելի է ասել, որ եւրոպական քաղաքակրթութիւնը ձեւաւորել է նաեւ այդ արժեքներով: Կարծում եմ, որ սա արդէն նշանակութիւն ունեցող փաստ է: Իհարկէ, կայ նաեւ Չեր նշած հանգամանքը: Կարծում եմ, սա կարեւոր իրադարձութիւն է նաեւ սփիւռքահայութեան համար, իսկ Հայաստանի համար եւս մէկ առիթ է ամբողջով սփիւռքի հետ կապերը, որոնց մենք մեծ նշանակութիւն ենք տալիս: Խօսքն այստեղ ոչ միայն ներդրումային քաղաքակրթութեան ակտիւացման մասին է, այլեւ ատելի լայն ընդգրկում ունի՝ Հայաստան-սփիւռք կապերի ամրապնդում, ինչն ընդհանրապէս նշանակում է քաղաքական, տնտեսական, մշակութային ներուժի ներգրաւում:

- Պարոն նախագահ, Դուք այս տարածաշրջանում եզակի քրիստոնեայ պետութիւններից էք: Ճիշտ է, կայ Վրաստանը, որը հարեւան է ձեզ եւ Ռուսաստանը, որը քիչ հեռու է, բայց այս տարածաշրջանում ձեր հարեւանները հիմնականում մուսուլմանական պետութիւններ են, որոնց հետ դուք վատ յարաբերութիւններ ունեք: Չէ՞ք վախենում, արդեօք, որ ձեր քրիստոնեայ լինելը այսպէս ի ցոյց դնելով եւ շեշտադրելով, դուք կարող էք ատելի ուժեղացնել հակամարտութիւնը ձեր՝ քրիստոնեայ պետութեան ու մուսուլմանական երկրների միջեւ:

- Եթէ մենք այդ հանգամանքը հաշի առնէինք, ապա երեւի թէ 1700 տարի առաջ քրիստոնեությունը չէինք ընդունի կամ դրանից յետոյ վաղուց փոխած կը լինէինք: Հաւանաբար գիտէք, որ Երուսաղէմում եւ Բեթղեհեմում այդ կարեւոր քրիստոնեական սրբավայրերում Հայ առաքելական եկեղեցին իր տեղն ունի, այսպէս ասենք, իր մասը: Նման կարգով ներկայացած լինելը նաեւ պարտաւորեցնող հանգամանք է իւրաքանչիւր ժողովրդի համար: Ես կարծում եմ, որ այդ խնդիրն կարելի է մի քիչ այլ տեսանկիւնից մօտենալ: Գուցէ, միջին դարերում իսկապէս վտանգատր էր քրիստոնեայ լինելը այս տարածաշրջանում, բայց հիմա կարելի է անդրադառնալ նաեւ քաղաքակրթութիւնների երկխօսութեան համատեքստում, ինչը կարող է նաեւ շատ մեծ ու հետաքրքիր առաւելութիւն լինել: Մեր եկեղեցին շատ ակտիւ է էկումենիկ շարժման մէջ: Հայ եկեղեցին բաւականին լաւ ներկայացած է Իրանում, արաբական երկրներում, գրեթէ ամէն տեղ, որտեղ կայ հայ համայնք, եւ երբեիցէ նման խնդիրներ չեն առաջացել: Այո, նախկինում լուրջ վտանգ էր, սակայն այսօր, կրկնում եմ, կարող է առաւելութիւն լինել:

Միեւնոյն ժամանակ ուզում եմ նշել, որ այդ տօնակատարութիւնն ամենեւին չի նշանակում, թէ մեր ժողովուրդը մոլեռանդ հուատացել է: Այն փաստում է, որ մենք մինչ մեր օրերը պահպանել ենք քրիստոնեական արժեքները, որոնք հիմնականում քարոյական եւ համընդհանուր արժեքներ են:

- Պարոն նախագահ, Ֆրանսիայի Ազգային ժողովը մի քանի օր առաջ քիտարկեց Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ օրինագծի օգտին: Արդեօք կարծո՞ւմ էք, որ այդ քիտարկութիւնը միայն մի փուլ է, որը հետագայում պետք է հանգեցնի այլ երկրների խորհրդարաններում նմանատիպ քիտարկութիւնների:

- Կարծում եմ այո:
- Ինձ ասել են, որ ի տարբերութիւն Չեր նախորդի, Դուք այժմ ձեր դիւանագիտութեան առանցքներից մէկը հռչակել էք Հայոց ցեղասպանութեան հարցի ճանաչումը տարբեր երկրների կողմից: Իսկապէ՞ս այն հայ դիւանագիտութեան առանցքային հարցերից մէկն է:

- Ես այլ կերպ կը ձեւակերպելի: Նախկինում այդ հարցով ուղղակի չէին զբաղում: Համարում եմ, որ, այո, արտաքին քաղաքականութեան մէջ այն իր տեղն ունի, բայց չեմ կարող ասել, որ մեր ողջ արտաքին քաղաքականութիւնը պէտք է ուղղված լինի ցեղասպանութեան ճանաչման խնդրին: Այդ ուղղութեամբ հիմնական աշխատանքը կազմակերպւում է հայկական համայնքների կողմից, որոնք, ըստ էութեան, ցեղասպանութեան հետեւանքով տարբեր երկրներում յայտնւած մարդիկ են կամ նրանց ժառանգները: Խօսքն ուղղակի հետեւեալի մասին է՝ Հայաստանը նաեւ միջազգային տարբեր ատեաններում փորձեց հարցի վերաբերեալ ձեւակերպել իր յստակ մօտեցումը: Կարծում եմ, հարցի յստակ ձեւակերպումը նաեւ ինչ-որ տեղ խթանեց հայկական տարբեր կազմակերպութիւնների ակտիւութեանը: Բայց, կրկնում եմ, գործի անմիջական նախաձեռնողը եւ իրականացնողը ոչ թէ Հայաստանի պետութիւնն է, այլ՝ սփիւռքը: Սա նաեւ այն հարցն է, որի շուրջ չկայ որեւէ տարածայնութիւն հայկական տարբեր կազմակերպութիւնների միջեւ:

- Պարոն նախագահ, երբեմն այնպիսի տպաւորութիւն է ստեղծւում, թէ Հայաստանը, որը գտնւում է այս տարածաշրջանում՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ, պայքարում է ցեղասպանութեան ճանաչման համար՝ պարզապէս տուրք տալով հայկական սփիւռքի ջանքերին, խնդրանքին կամ պահանջներին: Մփիւռք, որի անդամները երբեմն լաւ չեն պատկերացնում Հայաստանի իրական վիճակը:

- Այո, այդպէս չէ: Մենք չենք կարծում, որ ցեղասպանութեան ճանաչումը միայն սփիւռքի հարցն է: Ես կարծում եմ, Հայաստանն իբրև պետութիւն, ուղղակի պարտաւոր էր այդ հարցի վերաբերեալ իր տեսակէտը յստակ ձեւակերպել: Կարելի է ասել, որ սա ոչ միայն հայ ժողովրդի, այլև քաղաքակիրթ աշխարհի խնդիրն է՝ ելնելով նաեւ ՄԱԿ-ի ընդունած

Հասարակական

տարբեր բանաձևերից: Հայոց ցեղասպանութիւնը 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնն էր, եւ համոզուած եմ, որ միջազգային հանրութիւնն իր գնահատականը կարող էր տալ դեռ այն ժամանակ: Ասեմ նաեւ, որ այն ժամանակ բոլոր պետութիւնների, յատկապէս Ֆրանսիայի, Միացեալ Նահանգների եւ Գերմանիայի արխիւներում բաւական հարուստ նիւթեր կային կատարածի մասին: Այստեղ խօսքը խնդիրը լինել-չլինելու մասին չէ: Խօսքն աւելի շատ վերաբերում է այդ ամէնին գնահատական տալուն:

- Ինչ-որ մի պահի Ֆրանսիայի կառավարութիւնն ասում էր, թէ ցեղասպանութեան հարցը պատմաբանների խնդիրն է: Հնարատը չէ՞ր կանգ առնել այդտեղ եւ ասել, որ ցեղասպանութեանը թող պատմաբանները զբաղեն:

- Իմ անձնական կարծիքով, սա պատմաբանների հարցը չէ, քանի որ խօսքն այն մասին չէ՝ եղե՞լ է այդ երեւոյթը, թէ՞ ոչ: Միջազգային հանրութեան մէջ նման կասկածներ չեն եղել, այլապէս հարց կառաջանար, թէ որտեղից է նման մեծ սփիւռքն ընդհանրապէս: Խօսքը պետութիւնների կողմից այդ իրադարձութիւնների նկատմամբ վերաբերմունքի մասին է, մինչդեռ պատմաբանների մասին խօսել՝ նշանակում է կասկածի տակ առնել փաստը:

Ես եղել եմ Հոլոքոսթի թանգարանում եւ Իսրայէլում, եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներում: Վաշինգտոնի թանգարանում շատ տեսանելի մի տեղում մէջբերուած է Հիտլերի խօսքը, որն ասում է՝ «Ո՛նչնացրէք հրեաներին, ո՞վ է այսօր յիշում Հայոց ցեղասպանութեան մասին»: Սա մէջբերում է շատ յայտնի Ադոլֆ Հիտլերից, եւ, կրկնում եմ, Վաշինգտոնի ցեղասպանութեան թանգարանի ամենակենտրոնական տեղում է փակցուած:

- Պարոն նախագահ, թուրքերն ասում են, որ եթէ Հայոց ցեղասպանութիւնը ճանաչի տարբեր երկրների կողմից, դրանից կարող է երկու հետեւանք բխել՝ հնարատը է, որ հայկական պետութիւնն ասի, թէ թուրքերը հայերին կոտորել են Դիարբեքիրում, Ղարսում, տարբեր վայրերում, եւ ուրեմն, այդ տարածքները մերն են, այսինքն տարածքային հաւակնութիւններ լինեն, կամ ցեղասպանութիւնից տուժած մարդկանց սերունդները կարող են փոխհատուցման հարցեր բարձրացնել:

- Որքան գիտեմ, թուրքերը չեն ժխտում, որ նման իրադարձութիւններ տեղի են ունեցել: Խօսքը դրանց որակաւորման մասին է: Իհարկէ, տարբեր թեր են բերում տուժածների վերաբերեալ: Օրինակ, Թուրքիայի պաշտօնական տեւալները 300 հազարից քիչ աւելի զոհերի մասին են, հայկական տեւալներով՝ առնուազն մէկ ու կէս միլիոն: Թուրքերն ասում են, որ, այո, այդ ամէնը եղել է, բայց չի կարելի որակել որպէս ցեղասպանութիւն: Նոյնիսկ, եթէ մենք փորձենք հիմնուել հէնց իրենց որակումների վրայ, ապա, այդ իրադարձութիւնների, այդ սպանութիւնների հետեւանքով տուժածներն այսօր փոխհատուցում պահանջելու իրաւունք ունեն, թէ՞ ոչ: Եթէ փորձենք հիմնուել նաեւ եւրոպական իրաւունքի վրայ: Օրինակ, եթէ մարդը բանկում հաշիւ է ունեցել եւ այսօր կարող է ապացուցել ու ցանկութիւն ունի դատարանի միջոցով պահանջել, նման իրաւունք նա ունի՞, թէ՞ ոչ: Սա նաեւ մարդու իրաւունքների խնդիր է: Հրեաները Գերմանիայից տարածք չեն ուզում, բայց Հոլոքոսթից տուժած մարդիկ փոխհատուցման խնդիր դնում են: Ինչ վերաբերում է Չեր հարցի առաջին մասին, ապա այդ խնդիրները տարբեր հարթութեան վրայ են: Չեմ կարծում, որ ցեղասպանութեան ճանաչումը Հայաստանի համար իրաւական հիմքեր է ստեղծում տարածքային պահանջատիրութեան համար:

- Պարոն նախագահ, կուզենայի անցնել մէկ այլ թեմայի՝ Լեռնային Ղարաբաղի հարցով Ադրբեջանի հետ առկա հա-

կամարտութեանը: Երբ Փարիզում էիք, ես մի փոքր հետեւեցի ձեր երկխօսութեանը: Շատերն ասում են, որ ժամանակը շտապեցնում է: Նախագահ Ալիեւը 78 տարեկան է, նախագահ Քոչարեանը երիտասարդ է, բայց նրա երկիրը ծերանում է, որովհետեւ ազգաբնակչութիւնը մեկնում է, եւ որ առանց խաղաղութեան Հայաստանի տնտեսութիւնը չի կարող զարգանալ: Ուրեմն, պէտք է փոխզիջումների գնալ, այդ թում նաեւ տարածքային զիջումների: Ի՞նչ էք կարծում:

- Առաջինը՝ փաստերի մասին: Փորձեք համեմատել Հայաստանի եւ Ադրբեջանի համախառն ներքին արդիւնքը մէկ շնչի հաշուով: Կը տեսնեք, որ մօտաւորապէս նոյն մակարդակի վրայ ենք, թէւ Հայաստանը շրջափակման մէջ է եւ չունի նաւթային պաշարներ: Իսկ եթէ Ադրբեջանի համախառն ներքին արդիւնքից հանք ստացած եկամուտները, ապա մեր վիճակն աւելի բարօք կերտայ: Այդ բանաձեւը, որի մասին Դուք ասացիք, ձեւաւորել է մի քանի տարի առաջ: Ինձ ասում էին, մի քանի տարի յետոյ Ադրբեջանը շատ մեծ զարգացում է ապրելու, իսկ Հայաստանն, ընդհակառակը, թուլանալու է: Կեսնքը ցոյց տուց, որ դա այդպէս չէ: Մենք, յամենայն դէպս, եթէ ոչ արագ, ապա նոյն տեմպով ենք զարգանում: Աւելին ասեմ, որպէս պետութիւն մենք շատ աւելի կազմակերպուած ենք, եւ թէ ընդհանրապէս բարեփոխումների, թէ ժողովրդավարութեան առումով մեծ առաջընթաց ունենք: Սա ոչ միայն իմ գնահատականն է, միջազգային շատ ֆինանսական կազմակերպութիւններ եւս այդ կարծիքին են: Ինչ վերաբերում է արտագաղթին, նոյն երեւոյթը կայ նաեւ Ադրբեջանում, միգրացիոն աւելի շատ: Հայաստանում ուղղակի հարցը մի քիչ աւելի ցատու է ընկալուած: Այն ամէնն, ինչ ես ասացի, չի նշանակում, որ մենք շահագրգռուած չենք հակամարտութեան կարգաւորմամբ: Ես ուղղակի իրավիճակը ներկայացրի: Երկուստեք տնտեսական զարգացման համար, իհարկէ՛, շատ աւելի լուրջ հեռանկարներ կուներանք խնդրի կարգաւորումից յետոյ:

- Պարոն նախագահ, փաստօրէն Հայաստանը պատերազմում յաղթել է, տարածքներ է գրաւել եւ արդեօք պէտք է պահել այդ գրաւեալ տարածքները անասանամափակ ժամկէտով: Ի՞նչ էք կարծում:

- Մենք կողմնակից ենք խնդրի փաթեթային կարգաւորմանը, որը ներառում է Ղարաբաղի կարգավիճակի հարցը, գրաւեալ տարածքների ապագան, անվտանգութեան երաշխիքների հետ կապուած խնդիրները:

- Այնպիսի պայտարութիւն է, որ երկրի ղեկավարը կամ քաղաքական ղեկը երբ զիջումների վերաբերեալ որոշում է կայացնում, անմիջապէս բողոքի ալիք է բարձրանում երկրում եւ ինչ-որ չափով քաղաքական ղեկը՝ այժմ Դուք կամ նախկինում Տէր-Պետրոսեանը, կարծես թէ գերի է դառնում հասարակական կարծիքին:

- Նոյն խնդիրը, այո, կայ եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում: Նոյնը կարող ենք ասել եւ Մերձատր Արեւելքի, իսրայէլա-պաղեստինեան կոնֆլիկտի համար: Սա բնորոշ է բոլոր նման կարգի հակամարտութիւններին: Ինձ համար կարեւոր է՝ համոզուած լինել, որ որոշումը ճիշտ է եւ այդ դէպքում քաղաքական կամքը դրսեւորելու անհրաժեշտութիւն կը լինի: Ակնյայտ է, որ նման պարագաներում խաղաղութիւն հաստատելը, երեկի թէ, աւելի դժուար է, քան պատերազմ սկսելը: Նոյն կարգի դժարութիւններ կան նաեւ Ադրբեջանում: Միշտ լինում են կազմակերպութիւններ, որոնք աւելի արմատական են տրամադրուած, աւելի ազգայնական են, միշտ կը լինի ընդդիմութիւն, որը կը փորձի այս կամ այն հանգամանքն օգտագործել իր քաղաքական նպատակների համար: Ես սա բնական եմ համարում:

Ճար. էջ 9-ում

«Եհովայի վկաներ» աղանդը ինչպես որ կայ



«Եհովայի վկաների» մասին այնքան է խօսել, որ կարծես թե ասելու ոչինչ այլևս չկայ: Այդուհանդերձ, չի կարելի կրկին չանդրադառնալ այդ երեւոյթին եւ հաշի չառնել, որ տարեցտարի այդ կազմակերպութեան անդամների թիւն աճում է: Անշուշտ եհովականների գաղափարները կենսագործելու դէպքում, կը վտանգուի մեր ազգային անվտանգութիւնը: Պարզելու համար նրանց նպատակները, նախ պէտք է ծանօթանալ կազմակերպութեան ստեղծման պատմութեանը, կառուցածքին եւ գործունէութեան մեթոդներին:

Ե՞րբ եւ ովքե՞ր են ստեղծել կազմակերպութիւնը

1870 թ.-ին «Եօթներորդ օրայ աղւնտիստների» անդամներից մէկը՝ Չարլզ Ռասել անուն ազգանունով, միտք յղացաւ ստեղծել սեփական կրօնական կազմակերպութիւնը: Դա նրան յաջողեց, եւ կազմակերպութեան անդամներին սկզբնական շրջանում անառնում էին ռասելականներ: Այնուհետեւ 7- ամեայ կրթութիւն ունեցող առաջնորդի կազմակերպութիւնը մի շարք անառնումներ փոխեց՝ Դիտարան, Ժողովրդի բեւ, Բրուկլինեան տաճար (իրենց կենտրոնատեղի քաղաքի անունով) եւ այլն: Այսպէս շարունակեց մինչեւ 1931 թ. երբ կազմակերպութեան հերթական առաջնորդներից Ռուտերֆորդը «յայտնաբերեց» Աստուծաշնչի այն հատածը (Եսայի. 43.10.12), որտեղ գրած էր. «Իմ վկաները դուք էք, ասում է Տէրը», եւ դա վերագրեց իր ղեկավարած կազմակերպութեան անդամներին: Եւ այսպէս կոչեց «Եհովայի վկաներ»: Այսօր, նոյն յաջողութեամբ ցանկացած մէկ ուրիշը կարող էր ստեղծել որեւէ կազմակերպութիւն եւ նոյն վկայակոչումը վերագրել իրենց, պարզապէս Ռուտերֆորդն աւելի շուտ գլխի ընկաւ: Սա է իրենց «Աստծոյ վկաներ» անւանելու «հիմնատարումը», որի մասին կազմակերպութեան անդամները գերադասում են յիսուել:

Կառուցածքը

«Եհովայի վկաները» ամբողջատիրական կազմակերպութեան դասական օրինակ է: Նրա կազմակերպութեանն ու կարգապահութեանը կը նախանձէին անգամ այնպիսի կենտրոնացած կառուցածք ունեցող կազմակերպութիւններ, ինչպիսին է նացիստական կուսակցութիւնը: Կազմակերպութեան Հայաստանի կառոյցը ղեկավարում են երեցները, որոնք իրաւասու են հանդէս գալու կազմակերպութեան անունից եւ տնօրինում են ԱՄՆ-ից ստացուող միութեան որչ օժանդակութիւնը եւ Բրուկլինի պատկերով հրատարակուող գրականութիւնը: «Փորձի փոխանակման» նպատակով նրանք յաճախակի են լինում տարբեր երկրներում եւ հանդիպում տեղի եհովական առաջնորդների հետ: Կազմակերպում են նաեւ համաժողովներ ինչպէս տարածաշրջանային, այնպէս էլ աւելի մեծ մասշտաբներով: Օրինակ, Անդրկովկասի տարածաշրջանային ամենամեայ համաժողովը (կոնգրեսը) սովորաբար անց է կացում Վրաստանի Մարնեոլ քաղաքում:

Երեցներից ցածրը, ըստ կազմակերպութեան հիերարխիայի, քարոզիչներն են, ովքեր տեղերում (շրջան, գիւղ, քաղաք) կազմակերպում են եհովականների գործունէութիւնը եւ վարում են ժողովները: Նրանք կազմում են աշխատանքային գրասփիկ իւրաքանչիւր շարքային «վկայի» համար, որտեղ նշում է, թէ շարքայի որ օրայ, որ ժամին տուեալ անձը, իր գործընկերոջ հետ որտեղ պէտք է քարոզի եւ նոր անդամներ հաւաքագրի: «Վկաները» պարտաւոր են պարզապէս սամրել «իրենց» տարածքը տուն առ տուն (բացի փողոցային զրոյցներից) եւ գրաւոր ներկայացնել, թէ որ տան որ բնակիչն ինչպէս իրենց ընդունեց, ինչ կարծիք յայտնեց «Եհովայի վկաների» մասին եւ համաձայնե՞ց «համագործակցել» իրենց հետ: Որքան շատ մարդ յաջողի հաւաքագրել շարքային եհովականներին, այնքան մեծանում է հիերարխիայով վեր բարձրանալու հաւանականութիւնը: Ի դէպ, ամենադժուարը կազմակերպութեան համակիր լինելուց «վկայ» դառնալն է, որի համար անց է կացում խստագոյն քննութիւն: Համակիրները գտնում են հիերարխիայի ամենաընտրյալին աստիճանի վրայ: Եթէ կազմակերպութեան անդամներին խստօրէն դրած է ժողովներին յաճախելու պահանջը, ապա համակիրներից պահանջում է վերջնական ընտրութիւն՝ կամ կանոնաւոր յաճախել բոլոր ժողովներին, կամ այլևս ընդհանրապէս չյաճախել: Բնական է, որ այս պահանջը չի դրում կազմակերպութեան հետ առաջին շփումների պահին, այլ «ուղեղների լացման» որոշակի ժամանակահատուածից յետոյ: Ընդհանրապէս կազմակերպութեան ժողովները եհովականների հանդիպման հիմնական վայրն են: Այստեղ լուծում են բոլոր կազմակերպչական հարցերը, Աստուծաշնչից (իրենց իրաւատարակած, որտեղ առկայ են բազմաթիւ խեղաթիւրումներ) բացի, ուսումնասիրում են դարձեալ իրենց հրատարակած «Դիտարան» հանդէսը, այլ գրականութիւն, տրուում են կոնկրետ հրահանգներ:

Ընդհանրի որսը

Ստանալով հրահանգներ եւ զինելով համապատասխան գրականութեամբ, «Եհովայի վկաները» դուրս են գալիս «քարոզի»: Սովորաբար նրանք շրջում են գոյգոյգ, դիմում առաջին իսկ պատահած անցողորն «գրուցելու» առաջարկով: Նախ սկսում են խոստանալ յաւիտենական կեանք, երկնային դրախտ եւ նման այլ բաներ: Երբ չեն կարողանում համոզել, սկսում են ահաբեկել արմատազերծելով (աշխարհի վերջով, որն իրենց պատկերացմամբ լինելու է երկնքից թափուղ կրակի տեսքով), որից փրկելու են միայն իրենց անդամները կամ համակիրները: Ի դէպ, իրենց գործունէութեան ընթացքում եհովականները պարբերաբար «կանխագուշակում են» աշխարհի վերջը կամ Քրիստոսի գալուստը: Սակայն, երբ «կանխագուշակութիւնն» իրականութիւն չի դառնում, նրանք վերոնշեալ իրադարձութիւնների նոր բնականներ են յայտարարում: Իրենց «յայտնութիւնները» հիմնականում նրանք բնականաբար փնտրում եւ հրահանգում են իրենց իսկ հրատարակած գրականութեան մէջ: Դրանք անվրձար եւ առատօրէն բաժանում են որպէս թիրախ ընտրուած «գոհերին»: Աստուծաշնչի «զիտակները» ծիծաղելի վիճակի մէջ են ընկնում, երբ հանդիպում են քրիստոնեաների Սուրբ գրքին ծանօթ որեւէ մէկին: Օրինակ՝ եթէ վերջինս ասում է, որ հնարաւոր չէ իմանալ աշխարհի

Հասարակական

վերջը նշող տարեթիւը, քանզի նոյն Աստուծաշնչում ասուում է, որ որեւէ մէկն այդ մասին չի կարող իմանալ:

Ուղղածութիւնը, Նպատակներն ու հետեւանքները

«Եհովայի վկաները» իր ներկայութիւնն ունի աշխարհի բազմաթիւ երկրներում: Այս աղանդը միւսներից առանձնանում է պետական կառոյցին սպառնացող վտանգաւորութեամբ: Նրա անդամները չեն ճանաչում որեւէ իշխանութիւն, հայրենիք, ազգ, հրաժարում են ծառայել տեւալ երկրի բանակում: Թէ յատկապէս վերջին գործօնն ինչ վտանգ է Հայաստանի համար, կարծում ենք, անելող է եւս մէկ անգամ ասել: Կազմակերպութեան առաջին հարածի որջ ուժգնութիւնն ընդունում է ընտանիքը: Նրա մէկ անդամը դառնալով «վկայ» ձգտում է միւսներին եւս տանել իր ետեւից: Դա հանգեցնում է ընտանեկան վեճերի եւ ի վերջոյ՝ ընտանիքի քայքայման: Լինելով արտաքուստ քրիստոնէական, «Եհովայի վկաները», ըստ էութեան, հակաքրիստոնէական կազմակերպութիւն է: Բանը միայն այն չէ, որ նրա դաւանած դոյքներին մեծ մասը մերժում է որջ քրիստոնէայ աշխարհի կողմից, այլ որ եհովականների գործունէութեան սլաքն իր սուր ծայրով ուղղած է քրիստոնէայ եկեղեցիների դէմ ամբողջ աշխարհում: Այդ նպատակով աղանդը հսկայական միջոցներ է ծախսում: Տարեկան մի քանի տասնեակ գումարազարդ գրքեր եւ հանդէսներ են հրատարակւում աշխարհի անելի քան 100 լեզուներով: Դրանց միայն տպագրական ծախսերը հարիւր միլիոնաւոր դոլարներ են կազմում: Կազմակերպութեան անդամները դա բացատրում են աղանդի մեծահարուստ անդամների ներատուութիւններով, ընդ որում երբեւէ չիշատակելով որեւէ խոշոր ներատուի անուն-ազգանունը: Դժար չէ գլխի ընկնել, որ առանց պետական հովանաւորութեան, անելի ճիշտ, հզօր պետութեան հզօր հովանաւորութեան, անհնար կը լինէին նման հմարաւորութիւնները, նման արդիւնքների հասնելը եւ ի վերջոյ ամբողջ աշխարհում նման գործունէութիւն ծաւալելը: Դժար չէ նաեւ գլխի ընկնել, որ հէնց այնպէս ոչ ոք, այն էլ այդպիսի միջոցներ, քանուն չի տալիս, եւ կազմակերպութեան հովանաւորի շահերն ու նպատակները զուտ քաղաքական են: Իսկ թէ որ պետութիւնն է ձգտում միահեծան հեգեմոնիայի ամբողջ աշխարհում եւ այդ նպատակին հասնելու համար կիրառում բոլոր հնարաւոր ձեւերը, կարելի է կռահել:

Արա Սարսիրոսեան

Նախագահ Ռոբերտ... Շար. էջ 7-ից

- Փարիզում ասացին, որ նախագահ Ալիեւի հետ Չեր հանդիպումը տասնչորսերորդն է, որ ունեցել էր վերջին երկու տարիների ընթացքում: Գնահատեցին, որ այդ հանդիպումը լաւ անցաւ: Պէ՞տք է սպասել եւս տասնչորս հանդիպումների, որոնք լաւ կանցնեն, եւ որից յետոյ կը լինի արդէն որեւէ համաձայնութիւն:

- Դժարանում եմ նման կարգի թային գնահատականներ տալ: Սովորաբար մեր հանդիպումների ժամանակ մենք չենք կոնկրետացնում հանդիպման արդիւնքը, քանի որ քննարկող հարցերի շրջանակը լայն է: Իւրաքանչիւր խնդիր

առանձին կարող է այլ գնահատական ունենալ, սակայն փաթեթի, ընդհանուր որոշումների մէջ կարող է բոլորովին այլ հնչեղութիւն ստանալ: Կարող եմ ասել, որ դանդաղ, քայլ առ քայլ, բայց, կարծում եմ, ճիշտ ուղղութեամբ ենք շարժում:

- Տարածաշրջանում գտնող երկրներից Հայաստանն է այն երկիրը, որ մօտ յարաբերութիւններ ունի Ռուսաստանի հետ: Գիտեմ, որ կան բազմաթիւ պատմական նշանակու-թիւն ունեցող պատճառներ, բայց ռուսական ռազմական ներկայութիւնը Հայաստանում մեծ է եւ կարծես թէ անելանում է: Ասում են, որ Հայաստանում այդ ռազմական ներկայութիւնը Թուրքիայի հանդէպ անելի վտահ զգալու հանգամանք է:

- Ասածի մէջ ճշմարտութիւն, այո, կայ: Ռազմական ներկայութիւնը նաեւ պայմանաւորւած է հայ-բուրքական յարաբերութիւններով: Բայց եւ Չեր ուշադրութիւնն ուղղակի կը հրավիրէի հարցի անելի լայն կոնտեքստի վրայ: Հարաւային Կովկասի երեք պետութիւնները բաւականին փոքր են եւ անհամարելի իրենց ռեսուրսներով: Տարածաշրջանում ժամանակին ռազմական եւ անվտանգութեան առումով ձեւաւորւած էր ինչ-որ հաւասարակշռութիւն, լաւ թէ վատ, բայց եղել է այդպիսի մի համակարգ: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ նոր իրավիճակ էր ստեղծուել, եւ չեմ կարծում, որ այդ երեք փոքր պետութիւններն ի վիճակի կը լինէին դիմակայել այլ անելի հզօր պետութիւնների ակտիւացմանը տարածաշրջանում: Եւ յատկապէս Թուրքիայի ակտիւութեանը, մանաւանդ որ այդ պետութիւնները կարիք ունէին յարթահարել անցումային շրջանի դժարութիւնները եւ ոտքի կանգնել: Բնականաբար, եթէ կային նման մտահոգութիւններ, ապա դրանք մենք պէտք է փարատելիք հէնց Ռուսաստանի միջոցով՝ հաշի առնելով մեր աւանդական կապերը: Իմ գնահատականով, ռուսական ռազմական կայանի ներկայութիւնը Հայաստանում ինչ-որ տեղ փորձեց ինչ-որ կերպ մեղմել այդ կտրուկ փոփոխութիւնը՝ հաւասարակշռելով իրավիճակը: Ռազմակայանը նոր էլեմենտ չէ տարածաշրջանում: Այն եղել է, կայ, այժմ անելի փոքր ծաւալով, եւ պարզ է, որ դրանից տարածաշրջանի պատկերը չի փոխուում: Կարծում եմ, սա նազագոյն, բայց անհրաժեշտ քայլ է տարածաշրջանում կայունութիւնը պահպանելու համար:

- Վերջին հարցը: Այս հարցազրոյցը, որի համար ուզում եմ շնորհակալութիւն յայտնել թերթի եւ իմ անունից, նախորդում է Ֆրանսիա կատարելիք Չեր պետական այցին: Ի՞նչ էք սպասում Դուք այդ այցից եւ ընդհանրապէս ի՞նչ էք ակնկալում Եւրոպայից:

- Այցից առաջին հերթին ակնկալում եմ ընդհանրապէս երկկողմ յարաբերութիւնների հետագայ զարգացում: Մեր քաղաքական կապերը բաւականին ակտիւ են: Կը ցանկանայի, իհարկէ, ակտիւացնել եւ խթանել տնտեսական կապերը: Այդ առումով հիմքերն արդէն դրւած են, եւ մենք սկսել ենք բաւականին լուրջ աշխատել: Հայաստանում այսօր գործում են մօտ եօթանասուն հայ-ֆրանսիական համատեղ եւ մաքուր ֆրանսիական կապիտալով ձեռնարկութիւններ: Այդ ուղղութիւնը շատ կարեւոր է եւ պէտք է փորձենք զարգացնել: Ինչ վերաբերում է Եւրոպային... Մեր առեւտրաշրջանառութեան մօտ քառասուն տոկոսն այսօր Եւրամիութեան երկրների հետ է: Մենք այդ յարաբերութիւններին շատ մեծ նշանակութիւն ենք տալիս: Մենք մեզ համարում ենք Եւրոպայի մի մասը, եւ Հայաստանի մուտքը Եւրամիութիւնը դրա վկայութիւնն է: ■

Ժողովը թե՛ ազգային ցաւ

Կիրուշ Արզուման
25 նոյ. 2000 թ.

Թում է թե՛ ժողով անելը, մի ազգային եւ համայնքային ցաւ է. Պատգամաւորական ժողով, Թեմական Խորհուրդի ժողով, Միջինների Կենտրոնական վարչութիւնների ժողով,



Միատրների վարչութիւնների ժողով, Արեւստից միութեան, Մարզական միութեան, Մարմնակրթական միութեան, Երեցների միութեան վարչութիւնների ժողով, յետոյ յանձնախմբների ժողով, Ծնողական, Կրթական եւ... խորհրդների ժողով.

Ժողով, ժողով, ժողով...

...եւ արդէն դա գործ է նշանակում:

Փոյթ չէ թե՛ քանի ժամ կը խօսենք, չէ ո՞ր ընտրել ենք, կամ անելի շտա՞ նշանակել ենք ու գրաւել աթոռներ, ուրեմն եկէք խօսենք, խօսենք, խօսենք, իբրքէ ժողովրդի մը-տահոգութիւններն ու ցաւերն ենք ուզում բուժել.

Չէ ո՞ր ժողով անելով՝ գործ ենք անում:

Ժողովը որոշել է երեկոյեան ժամը 6:00-ին, սակայն «ՔրաՖիկի պատճառով» մենք մեզ իրաւունք ենք տալիս ուշանալու. չէ ո՞ր քջիջային հեռախօսը (մոբայլ) մեր ծոցում է, ուրեմն ժամի 6:30-ին ինքնաշարժի միջոց կը զանգենք եւ կասենք՝ ՔրաՖիկի պատճառով մի քիչ կուշանանք, միաները եկե՛՛լ են:

... Ու վերջապէս ժողովը կը սկսի ժամը 7:00-ին: Դէ մի քիչ խօսենք դէսից- դէմից, քանկութիւնից, ՔրաՖիկից, մի քիչ ընտանեկան դժարութիւններից... ու վերջապէս ժամը 7:30 ին ուզում ենք խօսել բուն խնդիրների մասին.- մի կէս ժամ խօսում ենք՝ թե՛ նախկին նիստերի արձանագրութիւնները կարդա՞նք, թե՛ թողնենք յաջորդ նիստին. բոլորը հեղինակատր կարծիք ունեն այդ կապակցութեամբ (չէ ո՞ր ժողովրդավար ենք, ուրեմն պէտք է լսենք բոլորի կարծիքը արձանագրութիւնների ընթերցելու մասին): Վերջապէս որոշում է յառաջիկայ իրաքանչիւր նիստում մէկը ընթերցենք եւ վստեղացնենք, արդէն ժամի 8:00-ն է. ընթերցում է 5 նիստ առաջայ արձանագրութիւնը եւ ապա վերջին նիստի արձանագրութիւնը՝ եթէ պատրաստ է, մի կէս ժամ էլ լսում ենք դիւանի ատենապետի դաստիարակչական ճառը, ապա ընթերցում է օրակարգի կէտերը՝ մի երկար օրակարգ, դէ արդէն յոգնել ենք. մի թէ՛յ կամ սուրճ խմենք ու շարունակենք, եղաւ ժամը 8:30-ը, ամբողջ օրւայ գործի յոգնութիւնը, ապա մի ժամ սպասում, արձանագրութեան՝ մոռացած կէտերի վերարժարծումը- ուղղումը եւ հանգստացուցիչ սուրճը,- էլ տրամադրութիւն չկայ բուն խնդիրներով զբաղելու, սակայն պիտի՛ խօսենք:

Օրակարգի առաջին կէտն է՝ գերեզմանատան քարտաշի խնդիրը, կամ այսինչ թաղամասում նոր դպրոց կառուցելու հարցը, դէ մի ժամ ու կէս էլ խօսում ենք այդ կապակցութեամբ եւ քանի որ հեղինակատր կարծիքներ շատ կան եւ ժամն էլ զիջելուայ 10:00-ն է, օրակարգգերը մնում են յաջորդ նիստերին:

Դէ, թող որ ժողովուրդը սպասի, ինչքան որ կուզի, Սուրբ Սարգիս եկեղեցին չլինի, Աստուծածինը հօ՞ կայ, հոգեհանգիստները մի քանի տարի էլ այնտեղ կը կատարենք: Հէնց այսօր հօ՞չենք վճռելու դպրոցների թոշակների հարցը, շատ-շատ եթէ ժողովուրդը բողոքի, կասենք՝ մենք տեղեակ չենք, յանձնախումբն է որոշել:

Ժողովրդին ինչ կապ ունի իր նւիրած դրամների որտեղ եւ ինչ նպատակով գործածելը, դեռ ժողովուրդը քրեանձ է կամ էլ Թաթա-ով գլուխը կը խառնենք, կը զբաղեցնենք, որակ ուզում ենք ինչ անենք, աշխարհը գնում է դէպի անորակութիւն, մենք հօ՞ չենք կարող ետ մնալ նրանցից, մենք նշանակել ենք անվճար՝ վարչական եւ ազգային ժողովների աթոռները գրաւելու, ժողովուրդն ինչ ուզում է թող ասի կամ էլ հովիւր կորցրած հօտի նման իր գլուխը պահի:

Մենք դեռ ժողով ենք անում.

Հայ աշակերտը գնում է հայկական դպրոց եւ հայերէնը պարսկերէնով գրում եւ խօսում,մեզ ի՞նչ կապ ունի, որ լաւ ուսուցիչ չունենք, չէ ո՞ր լաւին- լաւ պիտի վճարել, դէ փող չունենք:

Յետոյ կը խօսենք այդ կապակցութեամբ, միւս ժողովում:

Ազգային կալածները դեռ կը ծախենք, թողք մի քիչ հողը քանկանայ՝ յետոյ, դէ կարիքատր դու սպասիր, ուսուցիչ՝ դու մի քիչ էլ սպասիր թող հողի արժէքը բարձրանայ՝ յետոյ մի բան կանենք: Արտագաղթի մասին ինչ-չո՞ւ մտածենք, մենք պարտաւոր ենք ծննդական վկայականները յանձնելու նրանց, թող ով որ, որտեղ որ՝ ուզում է գնայ, մեզ ինչ, միթէ՞ մարդկանց պահապանն ենք:

Թատերախումբը, պարայումբը, երգչախումբը իր փորձն է կատարում ամիսներ,-ի՞նչ անենք որ սրահը զբաղւած է հարսանիքներով, թող որ մի ութ ամիս յետոյ թատրոնը բեմադրի կամ խմբերը ելոյթ ունենան, մենք դրամի պէտք ունենք ու ժողով ենք անում:

Եւ այսպէս դեռ շատ խնդիրներ մնում են ժողովների սեղանների վրայ:

Սակայն ազգային անիւր դեռ պը- տը- տ- ում է. չէ՞ որ այս համայնքում դեռ կան անհատներ ու վարչութիւններ, որոնց համար ժողովրդի իրաքանչիւր անհատը արժէք ունի, չէ՞ որ նրանք իրենց անշահախնդիր ու անկեղծ մասնակցութեամբ պատրաստ են աշխատելու եւ իրենց բարոյական ու նիւթական լուծանքները: Նրանք հաւատացած են որ ժողովուրդը իր բնագոյով հասկանում է ու զատում ճիշտը՝ սխալից, լաւը՝ վատից, ուստի եւ չպիտի խաբել ժողովրդին:

Ուրեմն եկէք, լուկ ժողովներ չանենք եւ մեզ եւս խաբենք, որ գործ ենք անում, ժողովների իմաստն ու նպատակը չաղաւաղենք, իրար յարգենք եւ ժողովը ժամին սկսենք, ժամանակին որոշումներ տանք եւ դրանք գործադրենք՝ ժամանակին: Խնդիրները յստակ օրակարգ դարձնենք ու մեզ չարդարացնենք որ՝ անվճար վարչականներ ենք: Իրաքանչիւր ազգային գործիչ, այնքան մեծահոգի եւ գիտակից պիտի լինի, որ իր յանձնառութիւնը՝ ժողովրդին ծառայելն է, այն էլ անվճար. չենք կարող, չընտրենք կամ էլ յանձն չառնենք անվճար ժողովական լինել:

Եկէք մեր գործով (եւ ոչ թէ պաշտօնով կամ ժողով անելով) հաւատ ներշնչենք մեր այս փոքր, սակայն գիտակից համայնքին՝ մեր ժողովրդին: ■

Նոր Տարիի Ահիշելը

Գրիգոր Հաքինեան
Շեղիա

Գրիգոր Հաքինեան



Նոր տարիի գիշեր էր: Ամեն տեղ տօնում էին:

Ուզում էի ժամը տասներկուսից առաջ տանը լինել՝ երեխաներիս հետ դիմաւորելու Նոր տարին: Մարդիկ էլ ինձ պէս ամեն մէկը մի կողմի վրայ շտապով գնում էին:

Մեր փողոցի սկիզբը մի բարձրաշէն սպիտակ տուն կար: Երբ հասայ այնտեղ, ներսից ծափահարութեան ու ուրախ աղմուկի ձայներ լսեցի: Նայեցի ժամացոյցին, տեսայ արդէն ժամը տասներկուսն էր: Այնպէս, որ չկարողացայ ժամանակին տուն հասնել:

Մեր փողոցի անկիւնից քիչ ներս ցնցոտիները հագին մի մարդ կանգնած էր: Նա ձեռքը պարզած, անշարժ ու անխօս յենած էր պատին: Միայն այդ ողորմելին էր, որ չէր շտապում: Քայլերս ուղղեցի դէպի նա, օգնելու նպատակով: Մօտեցայ, համարեա թէ ձեռքս կպցրի թեւին: Չեռքս դիպչելն ու վայր ընկնելն մէկ եղաւ: Կռացայ, ձեռք տուցի, տեսայ խեղճը վաղուց մենած էր ու փետացած...

Ամբողջ մարմնովս սարսուռ անցաւ: Մի վայրկեան ինձ զգացի այդ ողորմելու մահուան պատճառը. «էհ խեղճ մարդ միայն դու էիր, որ չէիր շտապում»:

Վեր կացայ, էլ չշտապեցի տուն: Մեր փողոցի անկիւնում սրճարանի մի խանութ կար: Գնացի այնտեղ, սուրճ պատկերեցի: Մուրճը խմեցի, բայց ոչ ջղերս հանգրստացաւ, ոչ էլ ողորմելու դիակը աչքիցս հեռացաւ: Խանութից դուրս եկայ, սակայն խեղճի դին դեռ այնտեղ էր:

Մարդիկ անցնում էին նրա կողքով, ոմանք մի չնչին մանր փող գցում էին ու հեռանում: Կամաց-կամաց քայլեցի դէպի տուն: Տնեցիները անհամբեր սպասում էին ինձ: Ի միջիայլոց այդ տարին արտասահմանից եկած մի ցանկալի հիւր ունէինք:

Ուզեցի անհանգստութիւնս թաքցնել, բայց չկարողացայ, դէմքս մատնում էր: Ինչքան փորձեցի անտարբեր ձեւանալ ու մոռանալ չստացուց:

Այդ գիշեր երկար նստեցինք: Երբ պառկեցի, երկար ժամանակ չկարողացայ քնել: Քնելուց էլ երազիս մէջ անընդհատ ողորմելու պատկերն էր աչքերիս յայտնուում: Այդպէս զարհուրելի տեսիլքներով լուսացրի: Դա 1966 թ. Նոր տարուայ գիշերն էր՝ Թեհրանում:

Այդ Նոր տարին էլ այդպէս դիմաւորեցի:

1966, Թեհրան

Ուզեցի որ մեծ մարդ լինել, լինել ազգիս շատ օգտակար, Բայց ինչ արած, մեր ժամանակ ցանկալի ասպարէզ չկար, Ասի գոնէ լինեմ գուսան, որ իմ ազգիս գովքը երգեմ, Այդ ճամբին էլ եղայ թերի, մնացի ես թոյլ ու տկար:

Խաւարամիտ մեր շրջանում՝ տանջանք, զրկանք շատ կրեցի, Ուսման ծարաւ, ուսման կարօտ, միշտ մնացի ու սիրեցի, Ով ընթերցող՝ թոյլ գուսանիս սիրտը կուզեմ լաւ հասկանաւ. Դրա համար այս տողերը թղթի վրայ ես գրեցի:

Էլ ի՞նչ անի ձեր խեղճ Գիքօն. կեանքս է անցել ու գնացել, Այսքան զրկանք-հալածանքը միշտ տարել է ու դիմացել, Հիմի գրիչ առել ձեռքս, նոր տողից եմ ես սկսում, Ձգում եմ որ ազգիս համար պարտական եմ շատ մնացել:

1970

* * *

Այ հայելի- հայելի,
Միշտ պլպլայ ու փայլի,
Դիտողներդ գնացին.
Դու նորերին վայելի...

Բայց դու մէկ օր կը ճաքես,
Կամ փշուր-փշուր կամ երկու կէս,
Ոչինչ չունես դու պահած,
Ափսոս որ միշտ դատարկ ես...

1991

* * *

Պտտում է ջրաղացս.
Դեռ կանգուն է, հպարտի,
Տալիս է իմ օրայ հացս.
Առանց երախտապարտի:

Մենք երկուսս իրար թիկունք.
Աշխատում ենք անպարտի,
Ամառ, ձմեռ, աշուն, գարուն,
Առանց երախտապարտի:

Ասենք հիմի ո՞վ կարող է
Մեզ հետ մրցել ու յարթել,
Մեր օջախը անմարող է.
Առանց երախտապարտի:

1966

* * *

Երկուսս արդէն երեք է դառել.
Չեռքիս մի սիրուն ձեռնափայտ առել,
Ներսից ինձ այրում, դրսից ուրիշին,
Ո՞ր կողմն եմ արդեօք կրակ շատ վառել...

Չեռնափայտով հպարտ քայլում,
Չուզողների մօտ մի քիչ փայլում,
Թէ ինձ եմ խաբում, թէ էլ նրանց,
Հէնց այս խաբելով եմ, մի քիչ վայելում:

1991

**Շարացրոյց՝
Դր. Վրէժ Տէր Ներսէս Աւագ
Քահանայ Ներսիսեանի
հետ**

-Արժանապատիւ Տէր Հայր, խնդրում եմ Ձեզ՝ ներկայացնալ:

-Դոկտոր Վրէժ Ներսիսեան, Քահանայական անունով՝ Տէր Ներսէս Ներսիսեան, ծնել է մեծերանի Նարմաթ քաղաքում 1948 թականին:

-Ո՞ր դպրոցներում եւ համալսարաններում էք ուսանել:

-Նախ Թեհրանի Սէյէդ Խանդան քաղաքում «Արամ» հայկական դպրոցում, ապա՝ 1958-65 թթ. Կալկաթայի Մարդասիրական ճեմարանում, այնուհետեւ 1965-68 թթ. Էջմիածնի Գեորգեան ճեմարանում ու՝ 1965-75 թթ. Լոնդոնի, Կինգս Բոլէջում՝ Աստուածաբանական եւ փիլիսոփայական համալսարանում, ուր՝ Դոկտորական եւ Մագիստրոսի աստիճանով աստիճանացի:

-Ինչպե՞ս եղաւ, որ հոգեւորական ուղին ընտրեցիք:

-1965 թ. լուսահոգի Վազգէն Կաթողիկոսը եկաւ Կալկաթա, չորս- հինգ աշակերտ ընտրեց, որ գնալինք Էջմիածին ուսանելու. միայն ես գնացի, միւսները մերժեցին: Ես առաջին սփիւռքահայ ուսանողն էի Էջմիածնում: Վազգէն Կաթողիկոսը ցանկանում էր, որ ես կուսակրօն հոգեւորական դառնամ եւ որովհետեւ ուզում էր ինձ առաւել բարձր կրթութեան հասցնել՝ Էջմիածնի ճեմարանը ասարտելուց յետոյ, ինձ ուղարկեց Լոնդոն՝ բարձրագոյն Աստուածաբանութիւն ուսանելու: Ես չհամոզեցի վարդապետ ձեռնադրելու ու Լոնդոնի «Կինգս Բոլէջը» ասարտելուց յետոյ, դոկտորական թէզի համար դիմեցի Բրիքիշ Լայքրին, բայց որովհետեւ Անգլիական քաղաքացի չէի՝ երեք տարուց յետոյ 1975-ից սկսեցի պաշտօնապէս աշխատել ու իմ ջանքերով, այնտեղում բացեց Հայկական բաժինը՝ երբ որ արդէն Բրիտանական հպատակութիւն ստացայ:

-Ե՞րբ էք ամուսնացել:

-1979 թականին գնացի Հայաստան եւ ամուսնացայ օրիորդ Լէյլայի հետ:


-Ե՞րբ էք քահանայ ձեռնադրել:

-1988 թ. Երեւանի Սուրբ Մարգիս եկեղեցում՝ Սըրբազան Պողոսապետանի ձեռնադր: Այդ առթիւ, Վազգէն Կաթողիկոսը, յատուկ կոնդակով, Ս. Էջմիածնից շնորհեց Քահանայական լանջախաչ կրելու իրաւունք: 1991-ից նաեւ Աւագ Քահանայի կոչում ստացայ:

-Ի՞նչ յուշեր ունէք Սուրբ Էջմիածնից:

-Մի անգամ, Մարշալ Յովհաննէս Բաղրամեանը, 1967թ. եկել էր մեր ճեմարանը. Վեհափառը ինձ ներկայացրեց գեներալին, որպէս նրա հայրենակից՝ իրանահայ: Նա շատ ուրախացաւ եւ ինձ ասաց. «Շատ ուրախ եմ, երիտասարդ, բայց ինչո՞ւ է մագերդ սպիտակել»...

-Ուրեմն թե՛ Հայոց եկեղեցու քահանայ էք եւ թե՛ Բրիքիշ Լայքրիի պաշտօնեայ:



-Նաեւ 1987-1999թթ.վարել եմ «Օրթոդոքս Էքումենիքըլ Չապլին» պաշտօնը՝ (Ուղղափառ եկեղեցիների Միջ-եկեղեցական հոգեւոր) «Սէրնթ Արանս Արբի» վանքում:

-Քանի՞ զուակ ունէք:

-Երկու տղայ, Տիրան եւ Ժիրայր անուններով, որոնք բարձրագոյն կրթութեան են հետեւում, մէկը՝ իրաւաբանութիւն եւ միւրը՝ օդանւաների գծագրչութիւն:

-Որե՞տէ պատգամ ունէ՞ք՝ թեհրանահայութեան ուղղում:

-Բարեւներս «Լոյս» երկշաբաթաթերթի խմբագրին եւ պաշտօնեաներին եւ բոլոր իրանահայութեանը: ■

**Շարացրոյցը վարեց
Շովիկ Էդգարեանը
Լոնդոն 25 Հոկտեմբերի 2000 թ.**

Խաջբառ համար 14-ի լուծած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	տ	ի	գ	ր	ա	ն	պ	ե	տ	ր	ո	ս	ե	ա	ն
2	ա	ն	մ	ո	ռ	ա	ն	ա	լ	ի	լ	ն	ե		
3	փ	ա	փ	ա	գ		դ		ա	կ	ն	ա	հ	ա	ր
4	ա	դ	ա		ե	լ	ա	կ		ր		ց	ա	ր	դ
5	ս		լ	ա	տ	ի	ն	ա	մ	ե	ր	ի	կ	ա	
6	տ	ա		ն	ն		ա	պ	ա			կ	ա	տ	ու
7	ա	ն	ի	ց	ե	ա	լ		կ	ա	մ		ճ	ա	ն
8	ն	ա		ա	լ	ք		ա		մ	ու	ր	ա	բ	ա
9		հ	ե	ժ		ց	ի	փ		ի	ր		ռ	ա	կ
10	ա		ա	ր	դ	ա	ր		լ	ր	ա	բ	ե	ր	
11	ն	ո	ր	ա		ն		հ	ն	ա	ն	ա	լ		իւ
12	ու	լ		ծ	լ	ե	լ		գ		ա	լ		լ	ա
13	ս	ո	ս	ի		լ	ի		ա	ն	լ	ե	գ	ա	լ
14	ու	ր	ա	ր			ն	ա	լ			ն	ո	ր	
15	մ	տ	կ		կ	ա	դ	ր		բ	ր	ի	գ	ա	դ

«Մայրենի լեզու»
Դասական Ուղղագրութեան
Կանոններ

ՌաՅայէ Իշխանեան

ոյ-ի եւ եա-ի գրութիւնները

Նոր ուղղագրութեամբ ույ երեք տառով արտայայտւած հնչիւնը դասական ուղղագրութեամբ գրուած է ոյ երկու տառով, ինչպէս՝ լոյս, բոյս, գոյգ, կոյս, նոյն, փոյթ, գոյն, առոյգ, քոյր, համբոյր, ցոյց եւ այլն: Նաեւ սրանցով կազմուածները՝ արշալոյս, տնաբոյս, միեւնոյն, անփոյթ, բագմագոյն, մօրաքոյր եւ այլն:

Նոր ուղղագրութեան յա տառագոյզի փոխարէն դասական ուղղագրութիւնն ունի եա տառագոյզը, իչպէս՝ Թումանեան, Տէրեան, Գայատեան, առաօտեան, ամերիկեան, ալպեան, ապրիլեան, երկարամեայ, կիրակնօրեայ, քրիստոնեայ եւ այլն: Նաեւ՝ Աղայեան, Սարոյեան, Գալոյեան, Թեքեան եւ այլն, այսինքն՝ ա-ից եւ ռ-ից յետոյ աւելանում է -յեան: Պէտք է գրել նաեւ՝ հայեացք, Գայեանէ, ախոյեան, դայեակ եւ այլն:

հ թ է յ

Դասական ուղղագրութեամբ միեւնոյն արժեքով բառակզբում գրուած է եւ հ, եւ յ, ընդորում հ-ով սկսող բառերը շատ աւելի են յ-ով սկսողներից: Ուրեմն, ճիշտ գրելու համար պէտք է յիշել, թէ որ բառերն են յ-ով սկսում: Եթէ գրական լեզուի բառակազմի հ հնչիւնը բարբառ-ներում (Վանի, Խոյի, Բայազէտի) հնչում է յ, գրական լեզուում գրում է հ-ով ինչպէս՝ հաց- խաց, հայ-խայ, հա- խա եւ այլն:

Բառակազմում բաղաձայնից առաջ հ լսելիս մեծ մասամբ գրում է հ՝ բացառութեան կարգով բաղաձայնից առաջ յ է գրում է գրում մի քանի բառերում՝ յղէ, յղի, յղկէ, յղփանալ, յտակ եւ սրանցից կազմուածներում:

Եթէ բառակազմում լսող հ-ն կարող է հանել՝ բառի մաստի պահպանմամբ, ուրեմն մեծ մասամբ գրում է յ, ինչպէս՝ յաջող-աջող, յարձակել-արձակել, յօնք-օնք, ունք, յառաջ-առաջ, յետոյ-ետոյ, Յովհաննէս-Օհաննէս, Օհան, Յովսէփ-Օսէփ, Յակոբ-Ակոբ եւ այլն:

Բայց այս կանոնները մասնատր բնոյթ ունեն, ճիշտ յ-ով սկսող բառերը յիշողութեան մէջ ամրակայելն է:

Կազմում է յ-ով սկսող բառերի ցուցակ (մօտ 100 բառ): Եթէ կասկածելի բառը չկայ այդ ցուցակում, ուրեմն հ-ով է սկսում: Ստորեւ բերած ցուցակի մէջ յ-ով սկսող բառերը հիմնականում ընդգրկուած են, դուրս են մնացել մի քանի հազարէկ գործածող բառեր (յ-երից յետոյ հաշի է առնւած բառերի այբբենական յաջորդականութիւնը):

Յագ (յագենալ), յածանալ, յախճապակի, յախտուն, յականէ, յակինթ, յանդիման, յանդիմանել, յանդուզն, յանկարծ, յանկերզ, յանձն (յանձնել), յանցանք, յանցագործ, յապաղել, յապաւել, յաջող, յաջորդ, յառել, յառնել, յասմիկ, «ժողիկ», յասպիս «քար», յատակ, յատուկ, յար «կից, միշտ», (յարել), յարաբերութիւն, յարատեւ, յարգ (յարգել), յարդ «գարման», յարդարել, յարկ, յարկանի,

յարձակել, յարմար, յարութիւն, Յարութիւն, յարակնել, յարելալ, յարեժ, յարէտ, յափշտակել, յեղ (յեղափոխութիւն), յուղարկ (յուղարկատրութիւն), յունապ, յունիս, յունար, յուշ, յութի, յութութ, յուսալ, յաղթ (յաղթել), յաճախ, յամառ, յայտ (յայտնի, յայտագիր), յանգ (յանգել), յեղեղուկ, յեն (յենարան), յեսան, յետ (յետադաս), յետոյ, յերիւրանք, յիմար, յիշել, յիշատակ, յիշոց, յիսուն, յիրաւի, յի, յղել, յղկել, յղփանալ, յոբելեան, յոգն (յոգնել), յոգնակի, յոխորտալ, յողողող «խախտու», յոյգ, յոյժ, յոյն (յունարէն), յոյս, յոպոպ, յոռի, յովագ, յովատակ, յորդ, յորդոր, յորձ (յորձանք), յորջորջել, յուզել, յուլիս, յստակ, յօղ, յօղած, յօժար, յօնք, յօշոտել, յօրանջ, յօրինել:

Յուցակում ընթերցողին քիչ ծանօթ որոշ մասնիկների ու բառերի մօտ փակագծում գրւած է նրանցից կազմուած որեւէ հանրայայտ բառ: Չակերտներում որոշ բառեր բացատրւած են:

Պէտք է իմանալ, որ եթէ յ-ով է սկսում, նրանցից կազմուած բոլոր ածանցաւոր կամ բարդ բառերի մէջ յ-ն պահպանում է: Օրինակ, ցուցակում կայ յարմար բառը, այդ բառից կազմուած անյարմար, յարմարութիւն, յարմարաւէտ եւ այլ բառերի մէջ յ-ն մնում է: Վարժութեան համար բերում են ցուցակում դրւած մի շարք բառեր եւ նրանցից կազմուածները:

յախճապակի- յախճապակեայ, յախճապակէպատ յանձայ- յանձխել, յանձխապատում, յանձխում, յանձխականութիւն, յանձխակի յամառ- յամառութիւն, յամառել, յամառօրէն յանդիման- յանդիմանել, դէմ յանդիման, յանդիմանութիւն, անյանդիման

յանձն(ել)- յանձնարարել, յանձն առնել, յանձնառու, յանձնաժողով, յանձնախումբ յապաղել- անյապաղ, յապաղում յաջորդ- յաջորդաբար, յաջորդել, յաջորդականութիւն, յաջորդում

յատակ- յատակագիծ, անյատակ յատուկ- յատկութիւն, իւրայատուկ, յատկապէս, յատկանիշ, անյատկանիշ, յատկանշական, յատկացնել, յատկացուցիչ

յարգ- յարգել, յարգանք, մեծայարգ, յարգելի, յարգւած, անյարգելի

յարդ- յարդանոց, Յարդագողի ճանապարհ յարմար- անյարմար, յարմարել, յարմարութիւն, անյարմարութիւն, յարմարաւէտ

յաւէտ- յաւիտենական, առյաւէտ, յաւիտեան յաւերժ- յաւերժական, յաւերժութիւն

յիմար- յիմարութիւն, յիմարանալ յիսուն- յիսունամեակ, յիսունական

յորդ- յորդառատ, յորդացող, յորդել, յորդանոս, յորդաբուխ

յորդոր- յորդորել, յորդորակ յուշ- յուշիկ, յուշագիր, յուշել, յուշարար, յուշարձան, յուշամատենան, անյուշ, վերյուշ

յոյս- անյոյս, յուսալ, յուսահատ, յուսաբել, յուսադրել, յուսահատութիւն, յուսախար

յօղ- յօղացալ, յօղակապ յօժար- յօժարել, յօժարական, յօժարութիւն

Հիմա էլ մի քանի օրինակ են բերում ցուցակում եղած (նաեւ փակագծում նշւած) ու նրանց հիմքերով կամ արմատներով կազմուած է յ ունեցող բառերի:

Ճար. յաջորդ էջում

Ակամայ երգիծաբաններ

Սկրտիչ Սարգսեան

ԱԻ. ԻՍԱԳԱԿԵԱՆԸ ԴԵՐ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

1954 թականն է: Աշուն : Հայաստանում ընթանում է գրողների միութեան 3-րդ համագումարը: Ժամանել են հիւրեր համարեա բոլոր հանրապետութիւններից: Մոսկւայից: Մոսկւայի պատիւրակութիւնը գլխաւորում է Կոնստանտին Սիմոնովը: Հաշտուզեկուցումից յետոյ (Գուրգէն Բորեան), ձայնը տրոււմ է Կոնս. Սիմոնովին, որի ելոյթը, ինչպէս պարզուած է, սովորական ելոյթ չէ, այլ մոսկւովեան էշելոնի գաղափարական մեկնակէտը, որը վըշտացնում է գրական արագանուն իր անողոք հարցադրումներով եւ էլ անելի սուր եզրակացութիւններով: Պարզուած է, որ խորհրդահայ գրողները հեռացել են գրականութեան զարգացման սոցիալատական ռէալիզմի մայրուղուց եւ փոխանակ խորհրդային կեանքն արտացոլելու, տուրք են տալիս պատմական թեմատիկային: Ձախջախիչ խօսքեր են ասուած Դեր. Դեմիրճեանի «Վարդանանք», Ստ. Ջօրեանի «Պապ թագաւոր» վէպերի, Նայիրի Ջաբեանի «Արա Գեղեցիկ», Խաչիկ Դաշտենցի «Տիգրան մեծ» դրամաների, Վիզէն Խեչումեանի «Ջարթրոց» գրքի, Ռաֆայէլ Արամեանի Կոմիտասին ներկայացնող Բաճայէլ Արամեանը, Խաչիկ Դաշտենցը, Վիզէն Խեչումեանը հաւարել են Ա. Իսահակեանի եւ Դեր. Դեմիրճեանի շուրջ եւ յորդորում են Դեմիրճեանին ելոյթ ունենալ եւ պաշտպանել հայ գրականութիւնը սիմոնովեան յարձակումներից:

Միայն դուք կարող էք այդ անել, վարպետ, դիմում են Դեմիրճեանին:

Իսկ Դեմիրճեանը ցանկանում է ջահէլներին քշել, որ չխաղան, առանց այն էլ իր լարած ջղերի հետ, բայց ո՞ւմ ես ասում: Տղաները կայել ու չեն պոկում Դեմիրճեանից: Իսկ Իսահակեանը լսում է ու ժպտում: Վերջում, երբ խնդրատուներն հանում են համը, գործին միջամտում է Իսահակեանը: Իմացեք, աղաներ, այսօր Դեմիրճեանը ելոյթ չի ունենալու, հանգիստ թողէք նրան: Նաեւ իմացեք, Դեմիրճեանի մէջ ապրում են երկու քաջեր. Քաջ Վարդանը եւ Քաջ Նազարը: Այսօր Քաջ Նազարի օրն է, վաղը՝ Քաջ Վարդանի: Վաղտ Դեր. Դեմիրճեանը ելոյթ կունենայ...

Եւ իրօք, յաջորդ օրը Դեմիրճեանը ելոյթ է ունենում, այն էլ ի՞նչ ելոյթ... Եւ մարգարեանում է Իսահակեանը... Ա. Իսահակեանը Հովի. Թումանեանի մասին Երջապատել ենք մեծ քանատեղծին: Կլանում ենք նրա իրաքանչիւր բառը, իրաքանչիւր խօսքը: Իսկ մա սիրում է մեր՝ երիտասարդներիս շրջապատը: Հարցնում է՝ որտե՞ղ ենք ծնել, ովքե՞ր են մեր արմատները, բնի՞ց ենք, թե՞ գաղթական:

- Օրինակ դու, տղայ ջան, որտեղացի ես...
- Չանգեզուրցի եմ...
- Դո՛ւ...
- Շիրակցի եմ...
- Դո՛ւ
- Վարաբաղցի...
- Դո՛ւ...
- Ջուախքից...

Եւ այսպէս բոլորին, մեկիկ-մեկիկ: Հարցեր, բայց ոչ անկետային, այլ՝ Իսահակեանական: Բողոքին ասելու, խորհուրդ տալու, ինչպէս ասում են՝ ազգնուտակը իմանալու պահանջ ունի մեր վարպետը: Նայում է ինձ: Ջուախքից ես, ես մեկն էլ Շիրակից է: Երգի, հեքիաթի եւ քանատեղծութեան աշխարհից էք, իսկ դարաբաղցիք ու միսները մեր երգն ու քանատեղծութիւնը պահպանող մար-

տիկներն են, սասունցիք ու մշեցիք մեր ծոտ դալիթներն են, Ֆիդայիները, նախիջեանցիները՝ մեր գողթան երգերն ու առասպելները յօրինողները: Այսպէս է հայոց աշխարհը, ամէն գաւառը մի աշխարհ, իր բնորոշ բառ ու բանով, արհեստներով ու արիւստներով...

Յետոյ լռում է: Խորհում է կզակը ցուպին հենած: -Այ, կարո՞ղ էք ասել, ով է մեր մեծագոյն բանաստեղծը,- եւ նայում է քննախոյզ ժպիտով:

-Դո՛ւք..., -միաբերան ասում ենք բոլորս: Իսահակեանի հայացքում կասկած կայ: Երեւի համաձայն չէ:

-Լա բան էք ասում,- ժպտում է,- եթէ ես հաւատամ: Իհարկէ, քաղաքաւարութիւնը եւ ծերուկիս չը վշտացնելու ցանկութիւնն է խօսում ձեր գնահատականի մէջ, այսպէս կասէիք, որ մեր մեծագոյնը Օհաննէսն է, Թումանեանը, որ նրա երգ ու քանատեղծութիւններով, առք ու առասպելով, նրա հայկականութեամբ է լցւած հայ աշխարհը: Նրա անմահութիւնն անգամ գնալով պէտք է զօրանայ, մինչ շատերի աստղերը կը խաւարեն ժամանակի անողորմութիւնից, նրա աստղը գնալով պիտի մեծանայ, հզօրանայ արեգակի մնան... ■

Դասական

Յագենալ (յագ-ից) յագուրդ, անյագ, յագեցում յաղթել- (յաղթ- ից)՝ յաղթանակ, անյաղթ, յաղթութիւն, յաղթական, յաղթանդամ, յաղթահասակ յանցանք՝ յանցակազմ, յանցաւոր, յանցակիր, անյանցանք, յանցապարտ, յանցագործ, յանցագործութիւն, յանցանշան յայտնի՝ անյայտ, անյայտանալ, բացայայտ, յայտ-մել, յայտնաբերել, յայտնագիր, յայտնագործել, յայտնա-պէս, յայտնութիւն յաջող՝ յաջողակ, յաջողութիւն, յաջողել յաջողը՝ յաջողաբար, յաջողդէլ, յաջողական յարել (յար)՝ յարաբերել, յարաբերութիւն, անյարիր, յարակատար, յարակից, յարահոս, յարաճում, յարատեւ, յարացոյց, յարափոփոխ յաւակնել՝ յաւակնուտ, յաւակնութիւն յաւէտ՝ յաւիտեան, առյաւէտ յեղափոխութիւն՝ յեղափոխական, հակայեղափոխական, յեղափոխել յեն (արան)՝ յենել, յենակէտ յետադաս (յետ)՝ յետադէմ, յետադիմութիւն, յետնորդ, յետգրութիւն, յետադարձ, յետին, յետոյք, յետամնաց յիշել (յիշ)՝ յիշողութիւն, յիշատակ, յիշաչար, անյիշա-չար, վերոյիշեալ, յիշատակարան յղի՝ յղիութիւն, յղիանալ, յղանալ, յղացում, մտայղա-ցում յղկել՝ յղկածութիւն, յղկած, անյղկել յոգնել՝ յոգնածութիւն, յոգնութիւն, յոգնաբերել, յոգնա-կի, անյոգնական, յոգներամ, յոգնակիութիւն յողորդը՝ անյողորդ յոռի՝ յոռետես, յոռետեսութիւն յուզել (յուզ)՝ յուզական, անյուզ, յուզիչ, մտայուզ, յուզ-մուտք յորձանք՝ յորձանուտ յուլիս՝ յուլիսեան յստակ՝ անյստակ, յստակել, յստակութիւն յօրինել՝ յօրինածք, յօրինող եւ այլն: Կան յ-ով սկստող մի քանի յատուկ անուններ՝ Յաբեթ, Յակոբ, Յարութիւն, Յիսուս, Յօր, Յովակիմ, Յովիաննէս, Յովման, Յովսէփ, Յուդա, Յուսիկ, Յասմիկ: ■

Մերոնք Ամերիկայում

Իրանահայերի միութիւնը եւ համայնքի առօրեան

Մար Դանիէլեան
(ԸՇ օրաթերթ, 15.11.00)



Լոս Անջելեսի իրանահայերի միութիւնը իր գործունէութեան 45 տարիներին նպատակ վերընձիւղել «աւետնաց երկրի» աւանդոյթները,

պահպանել ազգային լեզուն ու դիմագիծը: «Աւետնաց երկրի» մշակոյթն ու աւանդոյթներն է ուզում պահպանել նաեւ Երեւանում ստեղծած հայրենադարձ իրանահայերի միութիւնը: Հայրենակիցներն իրար յայտնաբերեցին եւ իրար հետ կապեր հաստատեցին միայն 1988-ից յետոյ: Հանդիպման մշտական վայրը Երեւանի ԲաՖՅու անուան դպրոցն է: Հերթական հանդիպումը տեղի ունեցաւ դպրոցի դահլիճում՝ հաւաքել էին երկրաշարժի ժամանակ ու դարաբաղեան պատերազմում զոհածների երեխաները, ծնողները: Լոս Անջելեսի իրանահայերի միութեան լիազօր ներկայացուցիչ Ժանետ Միրզայեանը միութեան հանգանական հերթական օգնութիւնն է բաժանում:

Լոս Անջելեսի իրանահայերի միութեան գործունէութեան եւ համայնքի առօրեայի մասին է մեր գրոյցը Ժանետ Միրզայեանի հետ:

- Ե՞րբ է ստեղծւել ձեր միութիւնը եւ ի՞նչ նըպատակներով:

- Մեր միութիւնն ստեղծւել է քառասունհինգ տարի առաջ Գլենդէլլում, ոչ շահութաբեր կազմակերպութիւն է, նպատակ ունի պահպանել հայ մշակոյթը, հայոց լեզուն ու գրականութիւնը: Անցած տասնամեակներում համայնքը արեւի մարդաշատ է դարձել: Հայերի արտահոսքը Իրանից ԱՄՆ շատացել է յատկապէս Իրանի իսլամական յեղափոխութիւնից յետոյ: Կանոնադրութեան համաձայն միութեան անդամ կարող են ընտրուել տասնութ տարին լրացած անձինք: Ներկայումս միութիւնն ունի 500 անդամ:

- Ի՞նչ կառուցւածք ունի միութիւնը, ինչպէ՞ս են իրականացւում ծրագրերը:

- Մեր միութիւնն ունի երիտասարդական, տիկ-նանց, մշակոյթի եւ երէցների բաժանմունքներ: Եռուն, աշխոյժ կեանքով են ապրում յատկապէս երիտասարդական եւ մշակոյթի բաժանմունքները: Ունենք թատերա-խումբ, երգչախումբ, իհարկէ՝ հայկական: Նշում են ազգային տօները, նշանաւոր հայ գրողների, գիտնական-ների, մշակոյթի ականաւոր գործիչների յօրեկանները, բոլորն էլ ճոխ հանդիսատէսներով, որոնց մասնակցները հաղորդակցում են հայ երգին, երաժշտութեանը, մշակոյթին ընդհանրապէս: Տպագրում են գրքեր: Մերոս կապեր ենք պահպանում Հայաստանի մշակոյթի գործիչների հետ, համերգային խմբեր ենք հրաւիրում, կազմակերպում ենք պարահանդէսներ, ճաշկերոյթներ: Բոլոր միջոցառումների հատոյթները մուծում են միութեան Ֆոնդ: Ուզում են յատկապէս նշել տիկնանց բաժան-

մունքի գործունէութեան մասին, որի անդամն են: Բաժանմունքն ունի երկու Ֆոնդ՝ «Փրկիր մէկ երեխայ Հայաստանում» եւ կրթական: Այնտեղ օգնում ենք շուրջ 300 աշակերտի, ինչպէս նաեւ առաջադէմ ուսանողներին: Այս տարի այդ Ֆոնդից որոշ օգնութիւն ենք տւել Ստեփանակերտի համալսարանի 85 ուսանողի:

Կայ նաեւ մի Ֆոնդ՝ «Յիշատակ Դարաբաղին» անու-նով, որից ամէն տարի օգնութիւն ենք տալիս նախապէս մեր ընտրած տասնհինգ կարիքաւոր ընտանիքների: Միութիւնը կազմակերպել է շաբաթօրեայ դպրոց, ուր սովորում են հայերէն գրել, կարդալ, հայոց պատմութիւն, երգեր, արտասանութիւն: «Փրկիր մէկ երեխայ Հայաստանում» Ֆոնդը հիմնադրել է Մանուշ Գէորգեանը, նա Իրանում եղել է «Հայ կին» միութեան նախագահը: Այդ Ֆոնդից տարեկան 100-ական դոլար ենք յատկացնում երկրաշարժի ժամանակ ու դարաբաղեան պատերազմում զոհածների որբերին, ինչպէս նաեւ կարիքաւոր ընտանիքներին:

- Ի՞նչ աղբիւրներից էք տեղեկութիւններ ստանում Հայաստանից, հայութեան կեանքից:

- Տարբեր են լրատութեան աղբիւրները, մեզ առատ միւթեր են տրամադրում «Ասպարէզ», «Նոր կեանք», «Նոր օր», Թեհրանի «Ալիք» թերթերը: Բացի այդ, վեց տարի առաջ եւ հիմնադրել են մի «Տեղեկատու», որը դարձել է մեր միութեան ամսաթերթը, լոյս է տեսնում տասներկու էջով, անկուսակցական է, տեղեկութիւններ է տպագրում մեր համայնքի կեանքում տեղի ունեցող իրադարձութիւններից, տարբեր միջոցառումներից, լուրեր ընդհանուր ամամբ հայութեան կեանքից, Իրանից, Հայաստանի եւ իրանահայերի մարզական անցուղարձից, բանաստեղծութիւններ, մեր աւանդոյթներին ու սովորոյթներին նիւրած յուշեր, պատմածքներ, մի խօսքով, ամէն ինչ, բացի քաղաքականութիւնից:

- Դուք մէկ ամիս շրջել էք Հայաստանի եւ Դարաբաղի գիւղերում, Երեւանում հանդիպումներ էք ունեցել, զանազան միջոցառումների էք մասնակցել: Ընդհանուր առմամբ՝ ձեր տպաւորութիւնները հայրենիքից:

- Գիւղերում շատ խնդիրներ ու կարիքաւոր ընտանիքներ կան, բայց եւ նրանց աղքատ չէի ասի, նրանց մէջ եւ հայարտութիւն տեսայ ու լատատեութիւն: Մա իմ հինգերորդ այցելութիւնն է հայրենիք, Երեւանը հինգ-վեց տարի առաջ իմ տեսածը չէ, շինարարութիւն կայ, քաղաքը գեղեցկանում է, աշխուժացել են ժամանցի վայրերը, շատացել են շքեղ արտօմէքենաները: Այդ բոլորը ինձ ուրախացնում են:

Քաղաքական կեանքից եւ ձեռնպահ եմ մնում: Նշեմ, որ շատ մտահոգում են գործազրկութիւնը եւ արտագաղ-թը: Արտագաղթը գրեթէ բոլոր դարերում ուղեկցել է մեր ժողովրդին, շարունակւում է նաեւ անկախ Հայաստանից: Մինչդէռ սփիւռքահայերս երազում ենք հզօր ու բարգաւառ հայրենիք ունենալ, եւ մի օր էլ, չգիտեմ երբ, վերադառնալ ու բոլորս մէկտեղուել: ■

Ժամանց

Խոհարարական հնարամտություններ



Բանջարեղեն, սունկեր, մրգեր

- * Խաշած բանջարեղենը չի կարելի երկար պահել իր ջրի մեջ, դրանից նրանք ջրիկանում են ու անհամանում:
- * Որպեսզի գազարը չսեւանայ, նրա վրայից կեղերը հարկատր է հանել շատ բարակ ու սուր դանակով:
- * Որպեսզի ճաքած լուխը չըռքոսանի, հարկատր է նրա ճեղքածքի մեջ լցնել խոշոր աղ:
- * Եթե վարունգը դառն է, հարկատր է նրան մաքրել եւ ընկղմել քեթու քաղցրացած կաթի մեջ:
- * Որպեսզի կտրտած սոխի գլուխը չչորանայ, նրան պետք է դնել պնակի մեջ՝ աղ արած կտրածքով ներքե:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞ր ժամին

- Գիտարշալի մասնակիցներից մեկը աշխատանքային ընկերոջը հրահրում է իր մօտ՝ սուրճ խմելու:
- Ե՞րբ գամ,- հարցնում է ընկերը:
 - Չեզ կարող եմ ընդունել միայն վաղ առաւօտեան:
 - Այսինքն՝ կեսօրին, իմ սիրած ժամին:
 - Այո, ձեր սիրած ժամին՝ երեկոյեան, լուսաբացին:
 - Այո, այո, դա յարմար ժամանակ է:
- Տարօրինակ խօսակցություն: Ընկերների համար եւ՝ երեկոն, եւ՝ առաւօտը, եւ՝ կեսօրն ու կեսգիշերը միեւնոյն ժամն են:
- Այո, երկրագնդի վրայ մի տեղ կայ, որտեղ այդ մտածածին բանը իրողություն է:
- Այդ որտե՞ղ է:



Հումոր

- Դատապաշտպանը հարց է տալիս վկային.
- Ի՞նչ հեռադասարան վրայ էիք դուք գտնում հանցագործության վայրից:
 - 3 մետր 58 սանտիմետր:
 - Իսկ որտեղի՞ց ձեզ, նման կոնկրետ քիւ:
 - Դա արել եմ գիտակցաբար, որովհետեւ ցանկացած պահի մի ինչ-որ հիմար ինձ այդ հարցը կը տար:



- Պարոն դատապաշտպան դուք չէի՞ք վերցնի իմ գործը ձեր պաշտպանութեան տակ:
- Իսկ ինչո՞վ եմ ձեզ մեղադրում:
- Բանկային կտրոններ կեղծելու մեջ:
- Շատ լաւ, ես համաձայն եմ պաշտպանել ձեզ:
- Շատ ուրախ եմ: Եթէ կանխավճար էք ուզում կարող եմ կտրոն դուրս գրել:



- Չբուցում եմ երկու ծանօթներ:
- Պատկերացնում ես ընկերոջս ապագան 7 տարով շատ միշտ գուշակել եմ:
- Եւ ո՞վ է եղել այդ գուշակը:
 - Դատաւորը, որը կարդում էր վճիռը:



- Ձոն, դու նորի՞ց բանտախցում ես:
- Այո, դժբախտութիւն ունեցայ, գտնել ինչ-որ պարոնի դրամապանակը:
- Բայց չէ՞ որ դա հանցագործութիւն չէ:
- Այո, բայց ես դրամապանակը գտայ աւելի շուտ, քան նա կորցրել էր:



- Ոստիկանը դժարութեամբ գեանից բարձրացնում է կռի մեջ տուժած հարբեցողին:
- Դուք կարո՞ղ էք բնութագրել ձեզ հարածող անձնատրութեանը, հարցնում է նա:
 - Ես հենց դրանով էի զբաղւած այդ պահին, երբ նա յարձակեց ինձ վրայ:



- Բանակում.
- Լսէք, խնդրում եմ արագացրէք եւ որոշէք դուք փող էք զցում բանկ, թէ վերցնում:
 - Դէ իհարկէ վերցնում եմ, գրողը տաճի: Որտեղ եմ ես խցկել ստորճանակը:



- Դատաւորը.
- Եւ այսպէս դատապարտեալը ձեզ անուանել է յիմար:
- Դա ճշմարտութի՞նն է:
- Այո՞:
 - Այդ դէպքում ինչի՞ց էք դուք բողոքում: ■

Համար 22-ի էջ 18-ում տպագրւած հանելուկի (Երեք սխալ) պատասխանը

Երեք սխալ- Սխալ է պատասխանել 3, 6 եւ 8-րդ հարցերին: Պետք է պատասխանել.

3-րդ հարցին՝ Աշխարհի ամենատաք ծովը Կարմիր ծովն է, որի ջերմութիւնը հասնում է մինչեւ 32 աստիճանի:

6-րդ հարցին՝ Ապացուցւած է, որ Երկիրը ձմռանը (յունարի 1-ին) հինգ միլիոն կիլոմետրով մօտենում է արեգակին: Այդ ժամանակ նրա հեռադասարանը արեգակից կազմում է 147 միլիոն կիլոմետր: Ամռանը (յուլիս 2-ին) Երկիրն ամենահեռու կէտումն է գտնում: Նրա հեռադասարանը կտր թով կազմում է 152 կիլոմետր:

8-րդ հարցին- ԱՄՆ -ի մայրաքաղաքը Վաշինգտոնն է:

Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 15

Կազմեց՝
Գագիկ Անդրեասեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1-Բանաստեղծ եւ գրական- հասարակական գործիչ (1894-1958) - ծերունի:
- 2-Ուղեկցորդ- անամպ երկնքում երեւում է նրանց բոյլը-որովհետեւ:
- 3-Այն, ինչ որ մէկը պէտք է ստանայ- մարմնի վերին մասով դէպի ներքեւ ծուել:
- 4-Որոճող եղջերաւոր խոշոր կենդանի- խցիկ- երբէք , բոլորովին:
- 5-Գոյութիւն ունենալ (առանց երկրորդ տառի) – ումպ - չտպագրւած, ձեռագիր մնացած:
- 6-Պտղի տեսակ- մարգական եւ այլ կարգի մրցութիւնների մէջ մրցակիցների շահած միատր:
- 7-Մուգ կարմիր - կրկնւած ձայնաւոր- չտեսնւած, չդիտւած:
- 8-Չառերով ու տասնհինգական քարերով խաղ- չտատանող, հաստատամիտ:
- 9-Այն ամէնը ինչ գործածուում է որպէս մարդկանց ուտելիք - պայտար:
- 10-Հայերէն «Ն» տառի անունը- Քրիստոնէական եկեղեցու գլխաւոր պաշտամունքային արարողութիւնը- ուր էր թէ, երանի:
- 11-Արքայ, իշխան- տարի:
- 12-Այն ամէնը , ինչ որ լա՛ որական՝ օգտակար է- պատուով վերաբերող՝ վարող:
- 13-Մայր բառի կրճատւած կոչական ձեւ-այծ- պայմանաւորւած ժամկետն անցած:
- 14-Թէ իզական եւ թէ արական անուն- երկինջիւն է- ցուցական դերանուն- հարիւր տարի:
- 15-Կենդանիների մորթու տոպրակ՝ գինի եւ այլ հեղուկներ լցնելու համար- արեւմտահայ հայրենասէր ու ազատատենչ վարդապետ, որը եղել է Խրիմեան Հայրիկի աշակերտներից:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

ԼՈՒԾԷ
ԽԱՉԲԱՌԸ

ՍՏԱՅԷ
ՆԻՐ

ՈՂՈՒՄՆԵԱՑ

- 1-Արձակագիր եւ բանասէր (1899-1937)- իրաքանչիւր ձեռքի եւ ոտքի վերջաւորութիւնը:
- 2-Առանձնանալ, մեկուսանալ- չսարքւած տուն- լատիւն սիրող, գթոտ:
- 3-Ամոքանք տայ, մախատել- դեռեւս մեղ չի դառել- անաւարտ թաղ- թանկագին քար:
- 4-Տունին վերաբերող- գործունէութեան՝ զբաղմունքի հնարաւորութիւն:
- 5-Առու, առակ- մարտական գործողութիւնների առաջաւոր գիծ:
- 6-Մարդու թիկունքը՝ ուսերից մինչեւ մէջքը- դա, այդ- ջերմ- առարկայ:
- 7-Ամբիոն- իրապէս, իսկապէս- յատուկ խմոր որ օգտագործուում է քանդակագործութեան եւ շինարարութեան բնագաւառներում:
- 8-Նիւթի ստոմային կառուցածքը ուսումնասիրող գիտութիւն- ժամանակի չափ- ման միատր:
- 9-Ցուցական դերանուն- անխառն, մաքուր:
- 10-Ճշմարիտ, իրական- մետաղ է- մրգերից:
- 11-Մեծ ու խոշոր դարձնել- աչքից գուրկ:
- 12-Ազնական, բարձր դասի պատկանող անձ- խօսքի եւ վարելակերպի նրբութիւնները հասկացող:
- 13-Մի տեղում շարունակ բնակող- ցուցական դերանուն:
- 14-Միակ, մնանը չունեցող- այրական, առնական (տառասխալով)- ռադիօակտի քիմիական տարր:
- 15-Գաճաճ, թզուկ- Հայաստանի հին մայրաքաղաքներից:

Խաչքառ համար 14-ի լուծւած տարբերակը տեսնել՝ էջ 12-ում:

Մարզական

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸՆԴՐԱԳԻՏԱՐԱՆ

ԳՆՂԱԿԻ ՎԱՐՈՒՄ Տեխնիկական հիմնական հր-նարքներից: Խաղացողը տեղաշարժում է թեթև հարած-ներով (մի ոտքով, կամ երկուսով՝ հերթականությամբ) առաջ մղելով գնդակը: Այն պետք է լաւ վերահսկելի: Ուղիղ գծով վարումը կատարում է ոտնաթմբի դրսի մասով, թեք վարելը՝ ներսի մասով: Եթէ մրցակցի կողմից անմիջա-կան սպառնալիք չկայ խլելու գնդակը, ապա այն կարելի է առաջ մղել նույնիսկ մինչեւ 10 մետր: Եթէ մրցակիցը գրո-հում է աջից, ապա նպատակայարմար է գնդակը վարել ձախ ոտքով, եւ հակառակը: Այս հնարքն անուանում է «գնդակի ծածկում»: Անհամեմատ բարդ է մրցակից պաշտպանների շրջապատում գնդակը վարելը, երբ պա-հանջում է տեխնիկական բարձր պատրաստակաճու-թիւն, ճարպկութիւն, շարժման ուղղութիւնը փոխելու հրմ-տութիւն:

ԳՈՒ-Դարպասը խփող իւրաքանչիւր գնդակը: Գոլի նախապայմանը գոլային պահի ստեղծումն է, երբ խա-ղացողը (խաղացողները) գտնում է այնպիսի իրադրու-թիւնում, որը հնարատրութիւն է տալիս գոլ խփելու: Ամէն խաղում վտանգաւոր պահերն անհամեմատ շատ են, քան գոլերը, քանի որ գոլային պահ ստեղծելը դեռեւս չի նշա-նակում խոցել դարպասը: Յարձակողի յաջողութիւնը կախուած է նրա ներհայեցողութիւնից, դիրքի ընտրութիւ-նից, հարածելու տեխնիկական մակարդակից: Լինում են դէպքեր, երբ Ֆուտբոլիստը պատահական հարածով գոլ է խփում իր դարպասը: Դա կոչւում է ինքնագոլ: Իսկ եթէ մրցակցի հարածից յետոյ գնդակը դիպչում է պաշտ-պանող թիմի խաղացողին եւ յայտնում դարպասում, ապա այդ գոլը գրանցւում է ոչ թէ վերջինի, այլ հարածը կատարած Ֆուտբոլիստի հաշիւին:

«ԳՐԵՄԻՕ» (Պորտու Ալեգրի)- Ակումբը հիմնել է 1903թ.: Մարզադաշտը՝ «Օլիմպիկօ» (70.000): Լիքերուա-դորեսի եւ միջմայրցամաքային գաւաթակիր (1983): Լա-ւազոյն խաղացողները՝ Լեաօ, Պաուլօ Ռոբերտօ, Իսի-դորօ, Բալտազար, Պաուլօ Յեզար եւ ուրիշներ:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (ծն. 1940թ.)- Կիսա-պաշտպան: Սպորտի վարպետ: Ֆիզիկապէս կոփած, աշխտասէր Ֆուտբոլիստ: 1961-63 եւ 1966թթ. Երեւանի «Մպարտակ», «Արարատ» թիմերի կազմերում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անց-կացրել է 44 խաղ, խփել 2 գոլ: 1965թ. ԽՍՀՄ առաջնու-թեան առաջին խմբի մրցաշարի յաղթող եւ փոքր ոսկէ մեդալակիր:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԷՂԻԱՐԴ (1929-88)- Հայաստանի վաստակաւոր մարզիչ: Հանդէս է եկել Երեւանի «Գինա-մոյի» փոխարինող թիմի կազմում: 1952թ. մարզական աշխատանքի է անցել մայրաքաղաքի Ֆուտբոլի նորա-բաց դպրոցում (հետագայում՝ հանրապետական), գլխա-

ւորել է Հայաստանի պատանեկան հաւաքականը, իսկ 1959-ին նշանակել է նոյն դպրոցի տնօրէն: 1967թ. ստանձնել է Երեւանի «Արարատի» ղեկավարութիւնը, իսկ 1968-72թթ. եղել է այս թիմի պետ եւ իր ներդրումն ունեցել նրա 1971թ. «արծաթէ» յաջողութիւնում: 1976թ. Ֆուտբոլի հանրապետական դպրոցի հետ մէկտեղ ղեկավարել է նաեւ օլիմպիական հերթափոխի հանրապետական ուսումնարանը (գիշերօթիկ մարզադպրոց): Նրա օրօք բուն զարգացում ապրեց հայկական պատանեկան Ֆուտբոլը եւ բարձր ցուցանիշների հասաւ համամիութեանկան մրր-ցասպարէզում: Է. Գրիգորեանն արժանացել է Հայաս-տանի Ֆիզկուլտուրայի եւ սպորտի վաստակաւոր գործչի կոչման:



ԴԱՆԱԵՆԱՆ ՌՈՐԵՐՏ (ծն. 1938թ.)- Կիսա-պաշտպան, կենտրոնական պաշտպան: Սպորտի վար-պետ: Դիրքը ճիշտ ընտրող, խաղային օղակների գործո-ղութիւնները համակցող, բարձրից եկող գնդակների հա-մար յաջողութեամբ պայքարող Ֆուտբոլիստ: 1960-63թթ. Երեւանի «Մպարտակ» եւ «Արարատ» թիմերի կազմե-րում հանդէս է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 81 խաղ, խփել 3 գոլ:■



ՈՍԿԷ ՕՂԱԿՆԵՐ

ԼՈՅՍՍ երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին:

- Կարինէ Բաղդասարեան – Գագիկ Մանուկեան
- Լարա Ղուջամանեան - Ռաֆիկ Վելիջանեան
- Չելզա Թեմբելեան - Էդիկ Ալեքսանեան
- Ֆոհոա Աւագեան - Ռուզիկ Վառդանեան


Նորամուտների գալուստը բարի

Սեռլի Թէյմուրեան
մայրը՝ Բելլա
հայրը՝ Վարուժ

Ալբերտ Ազարեանը՝ 20-րդ դարի լավագույն մարզիկ

Որոշւեցին տարւայ եւ հարիւրամեակի լաւագոյնները

Հերթական անգամ որոշւեցին Հայաստանի 10 լաւագոյն մարզիկները: Հանրապետութեան մարզական լրագրողների Ֆեդերացիայի անցկացրած հարցման արդիւնքում 2000 թ. լաւագոյն մարզիկ ճանաչւեց Միդնէյի օլիմպիադայի բրոնզէ մեդալակիր Արսէն Մելիքեանը: Հարցման 36 մասնակիցներից 21-ը նրան տեղ էին առաջին, 12-ը՝ երկրորդ, 1-ը՝ երրորդ տեղ: Ներկայացնենք տասնեակն ամբողջութեամբ եւ մարզիկների հաւաքած միատրները. 1. Արսէն Մելիքեան (ծանրամարտ)՝ 338, 2. Աշոտ Դա-



Ալբերտ Ազարեան



Արսէն Մելիքեան

Որոշւեցին նաեւ՝ անցնող հարիւրամեակի Հայաստանի լաւագոյն մարզիկները: Հարցման մասնակիցներից պահանջում էր նշել անուն-ազգանուն: Հաշւարկից յետոյ պարզ դարձաւ, որ 20-րդ դարի լաւագոյն մարզիկ է ճանաչւել լեզենդար մարմնամարզիկ, «օղակների արքայ» հռչակւած Ալբերտ Ազարեանը: Հարցման մասնակից 37 լրագրողներից 13-ը օլիմպիական խաղերի եռակի, աշխարհի ու Եւրոպայի բազ-



Իւրի Վարդանեան

մակի չեմպիոնին համարել էին առաջինը: Լաւագոյնների ցուցակում երկրորդը նոյնպէս մարմնամարզիկ է՝ մեր առաջին օլիմպիական չեմպիոն Հրանտ Շահինեանը (նրան առաջին տեղ էին յատկացրել 11 լրագրողներ), երրորդ տեղում օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եւրոպայի բազմակի չեմպիոն, մի քանի տասնեակ ռեկորդների հեղինակ ծանրորդ Իւրի Վարդանեանն է (8 առաջին տեղ), չորրորդում՝ շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսեանը (5), իսկ հնգեակը եզրափակում է օլիմպիական խաղերի չեմպիոն, Եւրոպայի եռակի չեմպիոն, բոնցքամարտիկ Վլադիմիր Ենգիբարեանը:



Հրանտ Շահինեան

Կարծում ենք, մարզատերների համար հետաքրքիր կը լինի, թէ հարցման արդիւնքում ո՞ր մարզիկը ո՞ր տեղն է գրաւել եւ քանի միատր հաւաքել: Ներկայացնում ենք լրի ցուցակը. 1. Ալբերտ Ազարեան (մարմնամարզութիւն)՝ 142, 2. Հրանտ Շահինեան (մարմնամարզութիւն)՝ 117, 3. Իւրի Վարդանեան (ծանրամարտ)՝ 93, 4. Տիգրան Պետրոսեան (շախմատ)՝ 58, 5. Վլադիմիր Ենգիբարեան (բոնցքամարտ)՝ 26, 6. Իգոր Նովիկով (հնգամարտ)՝ 26, 7. Ֆահնա Մելնիկ (թեթիւ ատլետիկայ)՝ 14, 8. Մնացական Իսկանդարեան (ըմբշամարտ)՝ 11, 9-10. Մերգօ Համբարձումեան (ծանրամարտ), Արմէն Նազարեան (ըմբշամարտ)՝ 10-ական, 11. Իսրայէլ Յակոբլոյսեան բոնցքամարտ)՝ 8, 12-13 Լեւոն Ջուլֆալակեան (ըմբշամարտ), Հրաչեայ Պետիկեան (հրաձգութիւն)՝ 6-ական, 14. Օգտէն Միրզոյեան (ծանրամարտ)՝ 4, 15-16. Իսրայէլ Միլիտոսեան (ծանրամարտ), Բենուր Փաշայեան (ըմբշամարտ)՝ 3-ական, 17-20. Սամսոն Խաչատրեան (բոնցքամարտ), Աշոտ Դանիէլեան (ծանրամարտ), Սմբատ Լալուտեան (շախմատ), Դաւիթ Համբարձումեան (ջրացատկ)՝ 2-ական, 21-22. Էդարդ Մարկարով (Ֆուտբոլ), Ռոբերտ Էմիլեան (թեթիւ ատլետիկայ)՝ 1-ական միատր: ■



Տիգրան Պետրոսեան



Վլադիմիր Ենգիբարեան

ԻՆՉՊԷՍ ՓՐԿԻՆՅԻՆ «ԳՐԻՄ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ»

Պրոֆ. Ռ. Նազարեան

Պատերազմի բոթը ես ընդունեցի ջութակը ձեռքիս, պիտների պալատում: Ինձ զարմացրեց մեր բարի ուսուցչի սաստիկ յուզմունքը. ի՞նչ մեծ բան է կռիւը, որ նա այդչափ խուճապահար է լինում: Ըստ իս, դա հնչում է մինչև անգամ հրապուրիչ եւ հետաքրքրական:



Այ թէ երբ են արկածները սկսում: Այնքանով արդէն լաւ է, որ այսօր կարիք չի լինի տաղտկալի գամմաները «սորցել»...

Առաջին անգամ սիրտս կծկեց, երբ մայրիկը հեկեկալով կախուեց ռազմաճակատ գնացող հայրիկիս վզից:

Պատերազմը աղէտ է: Այդ ես հասկացայ, երբ Գրիմից եկաւ քեռուս մահուան բօթը: Երբ հայրիկիս նամակները ուշանում էին, մայրս դառնում էր մռայլ եւ անխօս, տատիկն անիծում էր պատերազմ ստեղծողին եւ բանակ-ցութիւններ վարում Աստծոյ հետ հայրիկիս կեանքի եւ մատաղի հարցերով, իսկ մենք մոռանում էինք մեր գար-ճանքները եւ խօսում կիսաձայն:

Մահուան սարսուռը առաջին անգամ անցաւ մարմը-նովս, երբ մեր դպրոցի հարեւանութեամբ ռումբի պայ-թիւնից քափուցեցին մեր դասարանի պատուհանների ապակիները: Թւաց, որ փուլ եկաւ առաստաղը: Աղջիկ-ները ճշացին, իսկ ես բնագոյաբար գլուխս ներս քաշեցի ուսերիս մէջ: Յետագայում մենք ընտելացանք ռմբա-կոծութիւններին, բայց մայրիկին չվշտացնելու համար Վազգէնիկի հետ խցկում էինք մահճակալի տակ: Մայրս համոզուած էր, որ դա մեզ կը փրկի, եթէ յանկարծ առաս-տաղը փուլ գայ:

Վիկտորը մեծ էր ինձանից: Ռմբակոծութեան ժամա-նակ նա, հրճիգ ռումբերից առաջացող հրդեհի վտանգը խափանելու համար, հեքթապահում էր իր մեծ եղբօր՝ Իգորի հետ իրենց տան կտորի վրայ: Մէկ անգամ ինձ ցոյց տուեց այդպիսի մի ռումբիկի սեւացած մնացուկները եւ սկսեց պատմել, թէ ինչպէս նա խլեց Ֆշտացող ռումբը եւ խծկեց արագով լիքը արկղի մէջ: Ներս մտաւ Իգորը, եւ լսելով Վիկտորի պատմութիւնը, թեթեւ ժպտաց: Վիկտորը, չգիտեմ ինչու, շփոթեց եւ պատմութիւնն ասարտեց արդէն կիսաձայն, «ես»-ի փոխարէն «մենքը»-ը օգտա-գործելով: Ես անչափ նախանձում էի նրան: Բայց ի՞նչ ար-ած. մեր տնակը քաղաքի ծայրամասում էր գտնուում, այդ պատճառով, արագ, դժար թէ գրաւէր Ֆաշիստ օդաչուի ուշադրութիւնը:

Բայց չկայ չարիք առանց բարիքի: Երբ Ֆաշիստա-կան զօրքերը գրաւեցին մեր քաղաքը, նրանք նոյնպէս անուշադրութեան մատնեցին մեր տնակը, գերադասելով գրաւել քաղաքի կենտրոնական տները: «Մատանի *ան-գաջը խուլ*,- ասում էր տատիկն,- գոնէ էլ անասունածների իրենք չենք տեսնում»: Մակայն «աստանան», ըստ երե-տոյքին, հիանալի լողորթիւն ունէր: Մի օր էլ մեր բակը

մտաւ բարձրահասակ, գեղեցկադէմ մի սպայ եւ առանց այլեւայլութեան կրակեց ուղղակի մեր շան դնչին, քանի որ վերջինս խանգարում էր նրան տուն մտնելու: Սպան հիասթափուեց, մեր տան յարմարութիւններից եւ հեռացաւ, թողնելով իր հետեւից մեր չորքոտանի ընկերոջ դիակը: Դա պատերազմի իմ տեսած առաջին գոհն էր: Ես ատեցի այդ սպային: Եւ նրա դէմքը ինձ թուց այլանդակ: Աղպէս էլ տպաւորեց յիշողութեանս մէջ:

Յետագայում պարզեց, որ նրանք նոյն սառնասրտու-թեամբ սպանում են ոչ միայն շներին, այլեւ... մարդկանց:

Վիկտորի հետ ձեռք-ձեռքի տուած քայլում էինք կենտ-րոնական փողոցով:

- Հրեա՜ները...- տագնապախեղով շշմուշոց մէկը մեր ետեւում: Յետ նայեցի՞նք՝ գալիս էր մի հոծ բազմութիւն՝ շրջապատուած զինուորներով: Մեծամասնութիւնը կանայք, երեխաներ, ծերեր: Ոմանք արտասում էին:

Յանկարծ անբոխի մէջ երեսոց ջութակի մեր բարի ծերուկ ուսուցիչը: Նրա ձեռքից բռնած քայլում էր եօթ-ութ տարեկան մի աղջիկ՝ հաւամաքար նրա թոնրիկը: Ես փորձեցի առաջ խցկել, որպէսզի բարեւեմ ուսուցչիս, բայց Վիկտորը քաշեց ձեռքիցս.

- Գժել ես,- շշմուշոց նա, քննադատաբար զննելով իմ սեւամազ գլուխը,- քեզ էլ հրեայի տեղ կը դնեն ու կը քշեն: Յաջողօր օրը լուր տարածուեց, որ նրանց անխնայ կո-տորել են զիշերով՝ կայարանի ետեւը եւ լցրել փոսերը:

Դրանից յետոյ ատեցի՞նք բոլոր Ֆաշիստներին անխը-տիր:

Տեսնուած ու վիստուած վերադառնում էինք տուն: Ահա թէ ինչպիսիս է պատերազմը...

Ո՛չ, հրապուրիչ չէ նա ամենեւին:

Կեանքը կտրուկ դուրս էր եկել իր հունից, դառել անա-պահով, անորոշ: Շրջապատը խորթ, անորոք: Փակուել էին դպրոցներն ու պիտներների պալատը, լռել երեխաների զարթ աղմուկը: Մի անգամ Վիկտորը խոստովանեց, որ եթէ մերոնք հիմա վերադառնային եւ բացէին դպրոցները, նա այլեւս չէր փախչի դասերից, իսկ ես ասացի, որ մեծ հաճոյքով կը նստեմ գամմաները:

Սօս եւ տվորական անցեալը, այժմ թուում էր այնքան հեռու, հեքիաթային, անիրական...:

Տանը մայրիկս վրդոված պատմում էր հարեւանու-հուն.

- Անցնում եմ մեր շրջանային գրադարանի կողքով եւ մէկ էլ ի՞նչ էք կարծում, ո՞վ նայի պատուհանից...

- Նրա՞նք- ենթադրեց հարեւանուհին:

- Ոչ, սիրելիս, նրանց ձի-ե՛րը- վանկարկեց մայրիկը:

- Ի՞նչ բարբարոսութիւն:

Մենք հեռացանք խորհրդակցութեան:

- Հարկատր է պայքարել,- վճռաբար յայտարարեց Վիկտորը:

Ես ու Վազգէնիկը համաձայնեցի՞նք նրա հետ:

- Փրկում ենք ամենաարժեքատր գրքերը եւ պահում ձեզնայարկում մինչեւ մերոնք վերադառնան,- որոշեց Վիկտորը:

Մեզ դուր եկաւ նրա ծրագիրը: Վազգէնիկը յայտա-բարեց, որ նա էլ է գալիս մեզ հետ, մի շատ արժեքատր գիրք փրկելու համար: Պարզեց, որ դա Անդերսենի նկա-րագարը հեքիաթների գիրքն է: Այդ գիրքը Վազգէնիկը տեսել էր հարեւանի տանը

Երիտասարդի համար

եւ շատ հաւանել: Մակայն, Վիկտորն ասաց, որ Վազգէնիկին վտանգաւոր է գալ, իսկ հեքիաթները խոստացաւ բերել:

Երբ մենք զգուշօրէն ներս մտանք գրադարանի դռնից, այնտեղ գերմանացի զինուորները մաքրում էին ասֆալտայ ձիւրին, իսկ մի քանի տեղացիներ աղբն էին հանում բակ: Ամենուրեք թափուած էին քրքրուած գրքերը, իսկ բակում զինուորներից մէկը ճաշ էր եփում: Կաթսայիկը կախուած էր խարոյկի վրայ, իսկ կրակի մէջ կարծես ցաւից դանդաղօրէն ծալում ու գալարում էին այրող գրքերը:

Այնտեղ էին Ժիլ Վեռնը եւ Պուշկինը, ռադիօսիքողի գրքոյկները եւ «Հետաքրքրաշարժ Ֆիզիկան»... մի խօսքով մեր սիրած բարեկամները, որոնցով տարւում էինք, ոգեւորում, երգում:

Ձիւրորներից մէկը նկատեց մեզ եւ նոյն կատաղի ձայնով, որով ձիւրի վրայ էր ճշում, բղատեց. «կորէք, անիծեալներ»: Ես վախեցայ, բայց Վիկտորը բռնեց ձեռքիցս եւ դիմելով զինուորին, խեղճ ձայնով ասաց. «ունգերէ Ֆատեր», - եւ ցոյց տուց բակի կողմը, այսինքն՝ մեր հայրերը բակում աշխատում են: Ձիւրորը հաւատաց եւ ձեռքով անհամբեր նշան արեց, որ շտապենք:

Ձիւրը զբաղեցրել էին նախասրահը, ուստի հարեւան սենեակը անցնելու համար հարկաւոր էր նրանց տակով սողանցել: Ես վախեցում էի, որ ձիւրը մեզ քացի կը տան: Բայց Վիկտորը բացատրեց, որ բեռնակիր ձիւրը հանգիստ են լինում: Եւ իսկապէս, ձիւրը միանգամայն անտարբեր մնացին մեր նկատմամբ ու մենք, քսելով նրանց տաք փորերին, անցանք հարեւան սենեակը, որտեղ անկանոն կերպով թափուած էին հարիւրաւոր գրքեր: Սեր աչքերը չորս եղան, պատրաստ էինք բոլորը տանել: Առաջինը մեր աչքին ընկաւ Գրիմ եղբայրների հեքիաթների նկարագրող գրքոյկը: Վիկտորը այն թաքցրեց ծոցում՝ գօտու տակ:

- Վազգէնիկի համար- շնորհակալ եմ:

Ես խլեցի ռադիօսիքողի գրքոյկը եւ Ֆիզիկայի դասագիրքը, իսկ Վիկտորը՝ Դիմալի «Երեք հրացանա-կիրները» եւ հանրագիտական բառարանը: Նա ասում է, որ եթէ հանրագիտարանը կարդաս, ամէն ինչ կիմանաս: Արդէն ուզում էինք դուրս գալ, երբ լսեցինք, որ նախա-սորահում, քթի տակ երգելով մի զինուոր է անցողարձ անում:

- Մտնենք ձիւրի փորերի տակ, մինչեւ որ նա դուրս գայ սենեակից,- փափասց Վիկտորը:

Մողացիք ձիւրի տակ եւ պազեցինք: Յանկարծ ցնց-ւեցի ապտակից... Թո՛ւ, աստաման տանի, ձիւր պոչն էր: Յետոյ ձիւր գլուխը թեքեց եւ տխուր որոճալով նայեց մեզ:

- Շու՛տ,- Վիկտորը քաշեց ձեռքիցս,- զինուոր դուրս գնաց: Մենք վազելով անցանք նախասրահը, այնտեղից բակ եւ դժմառէմ բախտեցինք զինուորի հետ... Նա մի պահ վերից վար նայեց մեզ:

- Ֆը-Ֆիզիկա,- կակազեցի ես՝ ցոյց տալով գիրքը: Պատասխանի փոխարէն նա մի մի հատ խփեց մեր ձեռքերին: Գրքերը թափեցին գետին:

- «Վե՛գ»,-այսինքն թէ՛ «կորէք», - բղատեց նա:

Մենք շտապեցինք կորչել եւ միայն, երբ արդէն տուն է-ինք հասել, Վիկտորը ինքնաբաւական խփեց իր փորին եւ ծիծաղեց:

- «Գրիմ եղբայրներին» ի՞նչ ազատեցինք:

Իսկապէս, վրդովմունքից բոլորովին մոռացել էի:

Վազգէնիկը շատ գոհ էր մեր արշաւանքի արդիւնքներից: Իսկ ինձ սփոփելու համար Վիկտորը յայտարարեց.

Պայքարը շարունակւում է: ■

Վերջին տեղեկութիւններ... Շար. էջ 16-ից

Հիւսկէի փոփոխման նշաններ- Biopsy-ով կատարուած մանրադիտակային քննութիւնները կարող են յայտնաբերել հիւսկէի օրինաչափութիւնը խախտող փոփոխութիւններ, որոնք պարզում են կրծքի քաղցկեղի առաւել ունակութիւն: Այդպիսի մի փոփոխութիւն է համարում բրթակային in situ քաղցկեղը (Lobular carcinoma in situ, LCIS), որն ըստ շատ օնկոլոգների (ուտերի, կեղերի մասնագէտ) կրծքի իրական քաղցկեղ չի համարում, այլ՝ ապագայում կրծքի քաղցկեղի յանդէպ ռիսկի նշան: LCIS-ը կաթնաթոր գեղձերը պատող բջիջների մի անկանոն աճ է, որ չի տարածուում բրթակի մէջ: Եթէ ձեզ մօտ նկատուել է LCIS, ապա իւրաքանչիւր 6-12 ամիսը մէկ կլինիկական քննութեան պիտի ենթարկուէք կրծքի մասնագէտի մօտ եւ տարին մէկ անգամ մամոգրաֆիա-ի քննութիւն կատարէք: Մասնագէտը, հաւանաբար կը յանձնարարի tamoxifen կոչուած դեղի գործածութիւնը, ինչպէս կանխարգելման միջոց:

Բրթակի ոչ-տիպական հիպերպլազիա՝ *atypical Lobular hyperplasia, (ALH)* եւ կաթնափողերի ոչ տիպական հիպերպլազիա. *atypical ductal hyperplasia, (ADH)*: Մրանք բրթակների եւ կաթնաթոր փողերի բջիջների չափից-արագ բազմացումներ են: Սոյն բջիջները ի վերջոյ սկսում են փոխակերպուել եւ ստանալ ոչ-տիպական տեսք, այլ խօսքով, տարբերել միւս բջիջներից: Վերոնշեալ ուսումնասիրութիւնը ցոյց է տուել, որ բիոպսիայի միջոցով ճշտուած ոչ-տիպական հիպերպլազիա ունեցող կանայք չափաւորապէս անելի են ենթակայ կրծքի քաղցկեղի: Վերջին տեսակներով կարելի է ասել ALH-ը կրծքի տարածումն քաղցկեղի առաւել վտանգ է ներկայացնում, քան ADH-ը: Յամենայն դէպս, այս երկու իրավիճակ ունեցող կանայք պէտք է ենթարկուեն տարեկան մէկ մամոգրաֆիայի ու մէկ կամ երկու կլինիկական քննութեան:

Կրծքի քաղցկեղի անցեալ- Այն կանայք, որ կրծքի քաղցկեղի բուժման անցեալ ունեն, 1 տոկոսի չափով, ունենում են մի երկրորդ քաղցկեղ միեւնոյն կամ միւս ստինքում:

Շողարկման ենթակայութեան անցեալ- Բարձր դոզայով շողարկման անցեալ ունեցող կանայք կանգնում են 30 տարեկանից առաջ կրծքի քաղցկեղի նշանակալի ռիսկի առջեւ: Նրանք պիտի մամոգրաֆիայի եւ կրծքի կլինիկական քննութիւններ կատարեն, շողարկումների սկսման թականից 10 տարի անց կամ 35 տարեկան դառնալուց յետոյ: Նշելի է, որ 30 տարեկանից յետոյ ունեցած շողարկումները չեն յանգում կրծքի քաղցկեղի:■

Շար. 2 եւ վերջ

* Hyperplasia- Բջիջների չափից արագ բազմացում: